ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ —ԹԻՒ 831 Կ. ՊՈԼԻՍ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, 1899 ՅՈՒԼԻՍ 8—20 12 Րէպիւլ էվ՛ 1317 8 ԹԷՄՄՈՒԶ 1315 Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 831

«بوزانتيون»
ارمنيجه يومى وسياسى غزته . صاحب امتياز ومدير مسئولى
بوزانت كچيان
مطبعه و اداره خانه سى باب عالى جاده سنده ٢٣-٢٥ نومرولو
دائرهٔ مخصوصه ده در

Բիւզանդիոն

20 ՓԱՐԱՅ 20 ՓԱՐԱՅ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ
PUZANTION
Journal Arménien Quotidien, Politique, Financier et Litteraire
Directeur-Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, No. 23_25.
CONSTANTINOPLE

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՃԱՆԻԿԻ

ՑԱՆԿ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ

1.— 1828 կամ 1830. Թէոդորոսեան Մ. Վ. Սարգսեան, Պոլսեցի: Երկու անգամ պաշտօն կ'վարէ: Յետոյ Պատրիարքի [ժամանակին] հետ հակառակելով, պատասխանատուութենէ զերծանելու համար հեռաճական կ'ըլլայ:

2.— 1836. Կարապետ Մ. Վ... Զարշամպա Թաղուած: Շատ հարուստ է եղած և իր բոլոր ունեցածը՝ Թողած է դպրոցին և եկեղեցւոյն:

3.— 1840. Պետրոս Մ. Վ. Եդեսիայի. Միաբան Երուսաղէմի: Ասոր օրով ի հիմանց կ'նորոգուի Գուրջունլուի Ս. Գէորգ գեղեցիկ եկեղեցին:

Պետրոս վարդապետ իր նախորդին Թողած դրամը չորթելով՝ Լիբանան կ'առնէ չուէնը, պապական կ'ըլլայ, եւ յետոյ ամուսնանալով օձիքը կ'ազատէ:

4.— 1845. Մեսրոպ Մ. Վ. Միքայէլեան, Պոլսեցի: Աշակերտ Յակոբոս Արքեպս. Քէրէստէճեանի [Պատրիարք]: Ասոր օրով Ղուրուճէշմէի Ս. Կարապետ վաղեմի եկեղեցին ի հիմանց կ'նորոգուի գեղեցկապէս: Գուրջունլուի [Չիֆթլիք] գիւղացիք, որ Տէրէպէյլիներու կապուած էին, 1845ին կ'սկսին աւր [առաջնորդ] տալու:

Մեսրոպ Մ. Վ. կ'հրաժարի, և

5.— 1852. Յովհաննէս Մ. Վ. Եդեսացի կ'յաջորդէ իրեն: Ասոր օրով Էյլէ-Տէրէի մէջ նոր եկեղեցի մը կը շինուի Ս. Երրորդութիւն անունով:

6.— 1854. Մեսրոպ Մ. Վ. Միքայէլեան, դարձեալ առաջնորդ կ'ըլլայ, բայց այս անգամ «Պոնտոսեան վիճակաց», այսինքն՝ Ճանիկ և Տրապիզոն միացած: Մեսրոպ Վ. Զարշամպան կ'ընէ Առաջնորդանիստ: Այս միացում Թէև Մեսրոպ վարդապետի անձին վրայ է, սակայն իր մահէն յետոյ միացումը կ'շարունակէ: Մեսրոպ Վրդ. գոչ մորուք, խիստ և հակայ կազմուածքով, խելացի, գործունեայ, հեռատես, սրտոտ ու ծանրաբարոյ անձնաւորութիւն մ'է եղեր, բոլոր վիճակի ամէն կարգի հասարակութիւններու առջև ալ ակնածելի:

Զարշամպայի արդի Ս. Աստուածածին եկեղեցին ինք շինած է ի հիմանց նորոգելով: Շատ ընդարձակ քարուկիր շէնք մը սկսած է և չհասնելով ծախքին՝ վերին կէսը փայտակերտ ըրած է:

Մեսրոպ Վրդ.ին օրով կ'շինուին նաև Թէփէւ, Էօրէլի—Պէլ, Ալուպաշ, Սըրմա—Սու գիւղերու եկեղեցիները:

Մեսրոպ Վրդ. իր կրկին պաշտօնավարութեամբ 19—20 տարի Առաջնորդութիւն կ'ընէ նախ Ճանիկի վիճակին ու յետոյ Ճանիկ—Տրապիզոնի վիճակաց:

Կ'վախճանի 1865ին Զարշամպայի մէջ և կ'Թաղուի իր շինել տուած եկեղեցւոյն բակը: Գերեզմանը կից է եկեղեցւոյ հարաւային պատին:

7.—1866. Մեսրոպ Եպս. Սմբատեան Կ. Պոլսեցի. [որ Տրապիզոնի Առաջնորդ եղած է 1863ին: Կ'երեւի Թէ Մեսրոպ Մ. Վ. ՄինԹանճեանի վերջին տարիներուն Տրապիզոն զատուած է Ճանիկէն] միացեալ վիճակներուն կ'առաջնորդէ Տրապիզոնէն: Երկու անգամ այցելած է Զարշամպա: Ասոր օրով Օրտու և Ունեա, որ յառաջ Ճանիկի վիճակին Թեմերն են եղեր, բաժնուած են Ճանիկէն և Տրապիզոնի Թեմ եղած են: Այս բաժանումն առ դիւրինքով Ճանիկի Վիճակը տկարացած է և ա՛լ չէ կրցած կանոնաւորապէս Առաջնորդ պահել: [Աւելորդ է ըսել Թէ Ունեա այժմ Թեմ է Ճանիկի Վիճակին:] 1872—73 Ազգ. Կեդր. Վարչութեան համարատուութեան մէջ [էջ 62] «Ունեայ» և «Օրտուայ» իրենց գիւղերով Տրապիզոնի Վիճակին մէջ նշանակուած են:

8.—1871. Արիստակէս Մ. Վ. Տէր Սարգիսեան, Վանեցի, Պէրա ըսուած, [1863ին առաջնորդական փոխանորդ Տրապիզոնի] Ճանիկի առաջնորդական տեղապահ կ'ըլլայ իբր զատ Վիճակի մը.—Շողոքորթ ջաղացք շինելու համար շա՛տ դրամ կ'ծախսէ, եւ կ'կորսնցնէ:

9.—1876. Թէոդորոսեան Եպս. Տէօվլէթեան. առաջնորդ Ճանիկի: Կ'ըսեն Թէ վարժարաններու հակառակ եղած ըլլայ: Նշանաւոր եղած են սակայն Տէօվլէթեան Սրբազանի ձեռնադրութիւններն հովանաւոր ծառերու տակ, 40 ղրուշի փոխարէն:—Ջաւէշտաթերթ Մանուկի չատ նիւթ հայթայթեր է:

10.—1880. Մատթէոս Եպս. Նալչէեան, Կ. Պոլսեցի, միաբան Ս. Երուսաղէմի: Մատթէոս Եպս. 1870ին առաջնորդ կ'ըլլայ Տրապիզոնի: Տէօվլէթեանի մահուանէն յետոյ Ճանիկ նորէն կը միանայ Տրապիզոնի, եւ Մատթէոս Եպս. 1880ին Տրապիզոնէն կ'կառավարէ միացեալ Վիճակներն և Ճանիկի համար իր կողմէն առաջնորդական փոխանորդ կ'կարգէ Մամբրէ Մ. Վ. Բզնունին [1881ին]:

Մատթէոս Եպս.ի վախճանումէն [1884 Յունվր. 18] յետոյ, Մամբրէն կը տկարանայ Զարշամպայի մէջ՝ կուսակցութեանց հանդէպ, և 1886ին Թոքատ կ'փոխադրուի նոյն պաշտօնով[*]:

11.—1885. Գարեգին Մ. Վ. Սրուանձտեանց, Վանեցի [յետոյ եպիսկոպոս] առաջնորդ կ'ըլլայ Տրապիզոն—Ճանիկի միացեալ վիճակաց:

12.—1888. Ներսէս Մ. Վ. Ալիքեան, Կ. Պոլսեցի, Պատրիարքական փոխանորդ Տրապիզոն—Ճանիկի: Կ'պաշտօնավարէ 11 ամիս:

13.—1891— Արիստակէս Մ. Վ. Տէր Սարգիսեան, Վանեցի, դարձեալ կը պաշտօնավարէ իբր փոխանորդ:

14.—1892.—Եղիշէ Մ. Վ. Այվազեան, Արմաշցի եւ միաբան Արմաշու Վանքին: Ամասիոյ առաջնորդութենէ կը կոչուի Տրապիզոն—Ճանիկի առաջնորդութեան: Ասոր օրով Պաֆրա եւ Զարշամպա Ազգ. կալուածներ կ'ունենան: — Եղիշէ Վրդ. անձնասպան կ'ըլլայ Տրապիզոնի մէջ՝ պատուհանաւէժ մահով, 1895 Մայիս 16ին, իբր արդիւնք մտային խանգարման:

15.—1896 Թովմաս Մ. Վ. Այվազեան, Կարնեցի, Պատր. փոխանորդ Տրապիզոն—Ճանիկի: Հազիւ 4—5 ամիս կը պաշտօնավարէ:

16.—1897. Ազգ. Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովը կ'զատէ Ճանիկը Տրապիզոնէն, եւ առանձին առանձին առաջն. տեղապահներ կը կարգէ: Տրապիզոնի առաջն. տեղապահ կ'կարգուի Խորէն Մ. Վ. Պէշիկեան, Զառացի [Սեբաստիա] միաբան Դպրեվանուց:

Իսկ Ճանիկի առաջն. տեղապահ կը կարգուի Բարգէն Մ. Վ. Կիւլէսէրեան, Այնթապցի, միաբան Դպրեվանուց:

Ճանիկի Վիճակին առաջնորդանիստ քաղաքը կ'ըլլայ Սամսոն: Իսկ Ճանիկի Վիճակն ըսելով կ'հասկցուի ճիշդ Ճանիկի Միւթէսարրըֆութիւնը: Ճանիկի առաջնորդութեան երկու ծայրերն են Պաֆրա՝ Ալիս գետին [Գըզըլ Իրմաք] վրայ և Ֆաթսա՝ Բոլէման [Պուլաման] գետին վրայ. իսկ ներսէն մինչեւ Գավագ:

Բարգէն Մ. Վ. Սամսոն մտաւ 1897 Սեպտ. 28, Վարագայ Խաչի կիրակին:

—Ճանիկի Վիճակին մէջ առաջին անգամ կազմուեցաւ Օրէնսական Վարչութիւնը:

17.—1899 Մայիս. Ազգ. Կեդր. Վարչ. Խառն Ժողովը Մշոյ Վիճակին ընդհ. փանահայր-առաջնորդական տեղապահ ընտրեց Բարգէն Մ.Վ.ը: Իսկ Ճանիկի Վիճակին համար առաջն. տեղապահ Գնել Լէր. Գալֆայեանը, բնիկ Պոլսեցի և միաբան Դպրեվանուց:

ՃԱՄԲՈՐԴ.

[*].— Իսկ Տրապիզոն՝ Մատթէոս Եպս.ին կ'յաջորդէ Կ. Պոլսեցի Իգնատիոս Լէր. Շէչէճեան իբր փոխանորդ, և տարի մը միայն կ'պաշտօնավարէ:

ՔԻՉ ՄԸ ԳԻՏԱԿԱՆ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԵԼԻ՞ Է ԳՈՂՆԱԼ

Այս հարցում մերը չէ: Բարիզ հրատարակուող «Արձագանգ Հանքերու և Մետաղագործութեան» Թերթն է ընողն և կ'յաւելու.— Կարելի է կազի համարիչէ մը կազ գողնալ, ջուրի խողովակէ մը ջուր գողնալ, բայց Թելէ մը կարելի չէ ելեկտրականութիւն գողնալ: Այսպէս վճռեր է դատարան մը: Ո՞ր դատարանն է այդ: Գաւառայի՞ն դատարան մը արդեօք: Ո՛չ, բնա՛ւ. Լայպցիկի վճռաբեկ ատեանն է այս վճիռը տուողը: Միթէ կարելի՞ է: Այո՛, և ահա եղելութիւնը:

Բրուսիոյ Էլպէրֆէտ քաղաքի դատարանը դատապարտեր էր երկու ելեկտրագէտներ, որք գաղտնի Թել մը հեռագրաթելի մը կցեր և ելեկտրական հոսանքն իրենց չահուն գործածեր էին: Վճռաբեկ ատեանը սոյն վճիռը վերստին քննութեան առնելով, ջնջեր և յայտարարեր է Թէ յիշեալ ելեկտրագէտներ գող և յանցաւոր չեն, որովհետեւ, նախ՝ Ելեկտրականութեան բնութիւնը ծանօթ չէ գիտնականներու, և երբ ելեկտրականութեան հոսանք կ'ըսուի, այս հոսանք փոխաբերական իմաստով առնուած է: Երկրորդ. Ելեկտրականութեան նիւթը, էութիւնը լիովին սահմանեալ չէ գիտական տեսակէտով: Երրորդ. Գողութիւն տեղի ունեցած ըլլալու համար, պէտք է որ նիւթական առարկայ մը յափշտակուած, գողցուած ըլլայ, ինչպէս Թել մը, կուտակիչ գործի մը, են. բայց հոսանքը, գիտութեան արդի վիճակին մէջ, միայն իբր ելեկտրականութեան աղբերական կ'նկատուի, եւ չի գողցուիր. ինչպէս չեն գողցուիր հոտը, ձայնը կամ օդը, որք գոյացութիւն չեն համարուիր: —Այս երեք պատճառաբանութիւնները մէջ բերելէ յետոյ, կ'յաւելու նոյն Թերթը.—Ահա՛ արտակարգ իրաւագիտութիւն մը, մանաւանդ այնպիսի ժամանակ մը ուր տաղանդաւոր մարդիկ՝ Լը Սէննի պէս՝ գրական սեփականութեան բացարձակ նոր իրաւունքները կ'պաշտպանեն, ինչպէս նաեւ մտածութեան. խորհրդոյ սեփականութիւնը, որք նոյնպէս աննիւթական սեփականութիւններ են քան Թէ ելեկտրականութիւնն, այն բանն որ կրնայ ամփոփուիլ, վարուիլ, և որ կրնայ մինչեւ անգամ մահ պատճառել: Արդ, խորհուրդն ո՞չ ապաքէն մարդկային ելեկտրականութիւնն է, միեւնոյն զօրութեան եԹերական նըրբացեալ գոյացութիւնը, այն է՝ ամենուրեք և ամէնէն անըմբռնելի ձեւին տակ: Ուրեմն, եԹէ անհնար է խորհուրդը գողնալ, միթէ կարելի՞ է անպատիժ գողնալ կամ պահել ելեկտրականութիւնը:

Վերջին օրերս դատի մը մէջ Վոլդէրի կարծիքը մէջ բերուեցաւ, որ մարդկային խորհրդոյ ապագայ պահանջումները չկրնալով գուշակել, կը պնդէր Թէ գաղափարը չի կրնար մենավաճառ մը դառնալ, և իբր սահմանաւոր անձի մը շահը՝ պահուիլ: Եւ իբր օրինակ՝ ըստ իր կարծեաց ջախջախիչ մէջ կ'բերէր հետեւեալը.— Դրացիս, կ'ըսէր, տունս կ'մտնէ և իմ վառարանիս բոցէն իր աշտանակը կամ լապտերը կ'վառէ ու կ'հեռանայ: Միթէ ինծմէ բան մը առա՞ւ: Միթէ իմ վառարանս անոր գալէն առաջուան լոյսն ու ջերմութիւնը չունի՞: Ո՛չ, դրացիս ինծմէ բան մը առած չէ, բան մը չի պարտիր ինծ, բայց ի շնորհակալութենէ մը: Այսպէս է նաեւ գրական հանճարի գործն ալ. խորհողը կուգայ իր լապտերը կ'վառէ անկէ, բայց բան մը չառներ, բան մը չի սեփականեր իրեն: Այսու ամենայնիւ գիտե՞ք ինչ պատասխանեց հակառակորդ կողման փաստաբանը: — Վոլդէրէ ի վեր ժամանակները փոխուած են: Գիտութիւնն յառաջդիմութիւններ ըրած և նոր ու եզական լուսով լուսաւորուած է խնդիրը: Այսօր Վոլդէրի դրացիին ուզած լոյսն անորգել կ'ծախեն: Այսօր առկագին ունի նոյն իսկ ջերմութեան այն չառաւիղ զոր զգեստներուն մէջ կ'կրէք. քանզի ջերմութիւնն ալ կ'ծախեն ճիշդ ինչպէս ելեկտրականութիւնը կ'ծախեն: Ի՞նչ կ'ըսեմ, այսօր հեռաձայն գործիքի մը ջոցաւ ձայնն ալ կ'ծախեն, Լայպցիկի վճռաջինջ ատեանին կարծեաց հակառակ: Եւ միթէ Բարիզի Թատրոններն եկամուտներ չե՞ն հայթայթեր իրենց՝ մարդկային կոկորդներէ ելած Թռած ձայնի արձագանգը ծախելով Թատերաբաժանորդներու որք այնքան ալ սուղ կը վճարուին,—մեծ արուեստագէտ դերասաններու ձայնն ըսել կ'ուզեմ:

Ասկէ զատ ո՛չ ապաքէն գունատպագրութեամբ կ'ծախեն նաև անըմբռնելի պատկերը: Օդն ալ չի՞ ծախուիր միթէ, ո՛վ բրուսիական վճռաբեկ ատեան: Ի Զուիցերիա, զուիցերիական պանդոկներ, Ալպեան լեռներու մեծ առողջարանները կ'ծախեն կենդանի օդը, Թարմ և կենդանացուցիչ օդը: Ծովաբաղնիքներու կայարաններ աղի օդը կ'ծախեն, ինչպէս որ Նիսի մէջ գաղջ օդը և սգոյի մէջեւ վարդի բոյրը կ'ծախեն: Ճշմարտութիւնն այն է Թէ ընդհակառակն ջերմութիւն, լոյս, ելեքտրականութիւն, շարժիչ զօրութիւն, գեղգեղանք քաղցրահնչիւն, բոյր, խորհուրդ զանազան ձեւերն են աղբերական, եւ Թէ քանի՛ երԹայ, մարդս, որ սոյն աղբերականներէ օգուտ կ'քաղէ եւ զայն կ'խնդրէ, զայն կ'սպառէ և կ'վառէ անգամ, պիտի պահանջէ զայն իր գտնուած դարուն համար: Օր ըստ օրէ աւելի Թանկ պիտի վճարէ, քանի որ այս աղբեցութեան ձեւերն աճին բազմանան: Հեռաձայն, գունատպագրութիւն, համայնագրութիւն, իրենց արշալոյսին մէջ են դեռ եւս: Արդարեւ, Լայպցիկի Վըճռաբեկ ատեանը չատ յապաղած, եւ յուացած է. դեռ Վոլդէրի լապտերովն է:

Ա. Զ. Գ.

Կ. ՊՈԼՍՈՅ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի

Բիւզանդիոնի Կ. Պոլսոյ համար եռամսեայ բաժանորդագինն է միայն 36 ղրշ. ամսական ճիշդ 12 ղրշ.ի հաշուով:

Տ. ԹՈՐՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ ՔՀՆՅ.ԻՆ ԴԷՄ ԳԱՆԳԱՏՆԵՐ

ՄԱՆՉԷՍԹՐ, 1/13 Յուլիս 99.

Բիւզանդիոնի Յունիս 23/5 Թուոյն մէջ, «ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅԵՐԸ» խորագրով, Մանչէսթրէն՝ յղուած մը կարդացի Փ... ստորագրութեամբ: Սա խօսելով Եւրոպիոյ Առաջնորդ Իւթիւճեան սրբազանին ժամանման վրայ, ուզած է պզտիկ դիտողութիւն մ'ընել Մանչէսթրի հոգեւոր հովիւ Տ. Թորոս քհնյ. Խաճակեանի նկատմամբ: Թուեք որ Պ. յօդուածագիրը կատարեալ համարձակութիւն չէր ունեցած իր տեսութեանց մէջ, մանրամասնօրէն ցուցնելու մեր քահանային աշխատութիւնները. բնաւորութիւնը. Թէպէտ Մանչէսթրցիներուն աւելի քան 3/4 ին քաջալերութեան արժանացաւ. որովհետեւ առաջին անգամն է որ, Պոլսահայ մամուլին մէջ, մեր հոգեւոր հովուին նկատմամբ դիտողութիւն մը երեւան հանելու քաջութիւնն ունեցաւ: Երբեք չպիտի ուզէի Տ. Հօր մասին խօսիլ, քանի որ խօսողներ ալ չատ կան, բայց կան պարագաներ ուր լռելը մեղք է: Որչափ կ'գուշակեմ, Տ. Հայրն անկարող կ'զգայ ինքզինք, իր հօտը կառավարելու: ԵԹէ այդպէս է, ինչո՞ւ հրաժարականը չի տար որ ամէնուս կողմէ ծափահարութեամբ պիտի ընդունուի: ԵԹէ կարողութիւն ունի, ինչո՞ւ չաշխատիր օգտակար հանդիսանալ իր հօտին, ինչո՞ւ բարի արդիւնքներ չարտադրեր իր ժողովուրդին: Այս օրերս իր հրատարակած գրքոյկին մէջ բաւական խրատներ կուտայ, եղբայրսիրութիւն, ազգասիրութիւն են. բաներ կ'մեծրայ. արդեօք այս բառերէն ո՞րն իր խղճին մէջ գոյութիւն ունի: Ուրիշ տեղ մը խառն ամուսնութիւններու վրայ խօսելով ապագայ սերունդին կորուստը կ'գուշակէ ու զանազան ճամբաներ ցոյց կուտայ, առաջարկութիւններ կ'ընէ, որպէս զի հայ մանուկն իր տանը մէջ ուրոյն նկարագիրը պահել գիտնայ: Ասոնց ամենքն ալ աղէկ, բայց մեր Թուղթ սեւցնելով չեն գտնուիր ժողովուրդին բոլոր պէտքերը. երանի Թէ մեր ամէն գրիչ բռնողներն իրենց սրտին պէս խօսէին ու այն ատեն ըմբռնումը պիտի ունենայինք մեծ յուսախաբութեան Թէ, ինչե՛ր կան եղեր քօղի տակ ծածկուած դեռ: Քահանայ մը պէտք ինքը նախ խոնարհութիւն, սէր, ճշմարտութիւն, գԹութիւն ցոյց տայ իրեններուն. ո՞չ ապաքէն, բարոյականութեան մեծ աղբիւրը Քրիստոս այսպէս քարոզեց: Բայց որո՞ւ համար կ'ըսեմ խոնարհութի՛ւն. երբե՛ք. եկեղեցին ալ իր սեփականութիւնը կը համարի. Թաղ. Խորհուրդն ալ կարեւորութիւն չունի իրեն համար, եպիսկոպոսի մը ազդեցութիւնն ալ կատմը չարժեր, ժողովուրդին ցաւերուն ալ ականջ կախողներէն չէ. հապա միայն, ինքը, երէցկինը, տանն անդամները [գաւառացի կայտառ հէք որբի մը տեղ] պարտէզի կէնճաուղը, ու մէկ մ'ալ կիրակի օրուան պատարագն—այն ալ երբեմն, եԹէ կամքն ուզելու ըլլայ—կ'կատարէ: Կ'ճանչնամ բաւական Թըւով անձեր որք երկու—երեք տարիէ ի վեր Ս. Հաղորդութեան մօտեցած չեն, Տ. Հօրն ընԹացքին ու անտանելի խօսուածքներուն պատճառաւ: Սրտերնին արիւնած, աչքերնին արցունքով հայ գաղԹականները մեզի կ'պատմեն Տ. Հօրն ըրած «կորսուեցէ՛ք» սպառնալիքները, և ասոր պէս հազարաւոր դէպքեր, զորս եԹէ գրի առնել հարկ ըլլար, այս նեղ տողերու մէջ չպիտի կրնային պարունակել: Տ. Հայրն ուրիշ ծիծաղելի յանդգնութիւն մ'ալ ունեցաւ. յիշեալ հովուական տետրակն հրապարակ հանելով Թերեւս իր երեք տարուան մեղքերը քաւելու համար էր, և այդպէս Մանչէսթրցիներուն աչքին փոշի փչել ուզեց: Զարմանալի զուգադիպութիւն. տետրակներուն ըմբռնումին յաջորդ օրն իսկ, Մանչէսթրցի ազգայիններն ընդհանուր ժողով մը գումարելով, որոշեցին 20 ոսկի նուիրել մեր բարի Տ. Հօրը տարեկան՝ ի քաջալերութիւն իր հաւատ ու օգտակար ծառայութեան: Այս անակնկալ դէպք կայծակի պէս իր սրտին զարկաւ, որուն արդիւնքն եղաւ հետեւեալ օրուան պատարագը լալով վերջացնել. ո՛ր աստիճան յուսահատ էր այդ 20 ոսկիին սէրը. երբեք չմտաբերեց այդ վայրկեանին իսկ որ, քանի՛ քանի՛ ազնիւ սրտեր նոյն իսկ մայրեր լացուցած էր: Մեք այս տողերը եղելութիւններուն վրայէն մեծ... կ'անցնինք, ըստ կարգին պարզելու համար: Ասաւասիկ մեր Տ. Հայրը, անգլիագէտ, գերմանագէտ ու հայագէտ լուսաւորեալ Տ. Հայրը. բայց ի՞նչ արժէք ունի այս բոլորը: Ի՞նչ կարեւորութիւն ունին իր կեղծ առաջարկութիւններ, երբ կանոնք գործադրել չի գիտեր, երբ իր [սիրեցեալ] հօտին օգտակար հանդիսանալ չուզեր:

Ն. Մ. ՃԻՀԱՆԵԱՆ.

ԳԱՒԱՌԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՊԷՏՔԵՐ.—ԿԱՐՍԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԷՐԶՐՈՒՄԻ.— ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ԷՐԶՐՈՒՄ, 26 Յնս.

Կարնոյ պէս սուղ վառելանիւթ ապառող քաղաքներու համար, չուէտական primus անուանուած քարիւղի վառարանը տնտեսագիտօրէն չատ օգտակար կրնայ ըլլալ: Այս վառարան զոր տեղւոյս մէջ մասնաւորներ միայն դեռ նոր սկսած են գործածել, չատ խնայողական է Թէ՛ ժամանակի և Թէ ծախսի հայեցակէտով. 1/8 լիտր [եւրոպական] քարիւղը, 4 րոպէի մէջ վառելով կրնայ եռացնել 1 լիտր ջուր. նոյն վառարանով կարելի է կերակուր պատրաստել կէս ժամէն: Այսպիսի վառարան մը չատ կ'յարմարի մանաւանդ սակաւանդամ ընտանիքներու, ճամբորդներու և օդափոխութեան գնացողներու: Թէև Բէյնէօսի չատ տեսակներ կան, սակայն տեղւոյս մէջ առ այժմ միայն երկու տեսակները կը գտնուին, որոնմէ առաջինը կ'ծախուի 3/4 օսմ. ոսկւոյ իսկ երկրորդը՝65 ղշ.ի: Խնայասէրներու ուշադրութեան կը յանձնարարենք զայնս, մանաւանդ կարնեցիներուն, տեղական հանքածխոյ գործածութիւնը դեռ ընդհանրացած չըլլալուն և քարիւղի գնոյն մատչելի անկման պատճառներով:

*** Արդէն ծանօթ է ընԹերցող հասարակութեան Թէ Մայիսի վերջերը Կովկասու Կարս քաղաքն երկաթուղիով միացուեցաւ Տփղիսի հետ. առաջին կառախումբն յաջողութեամբ և անվտանգ ժամանած է ի Կարս. և այսօր Կովկասու ոստանէն մինչեւ հոս կարելի է գալ, չնորհիւ այդ նորաշէն երկաթուղիի գծերուն, միայն 4 օրուան մէջ, հեռաւորութիւն մը՝ զոր ասկէ առաջ 10—12 օրէն հազիւ կը կտրէին ուղեւորները: Բնականաբար, ռուսական քարիւղն այս կողմեր վերջին ծայր պիտի աժաննայ, փոխադրութեան և այլ յարակից ծախուց զեղչմամբ: Կարս, չնորհիւ այդ երկաթուղւոյն, կոչուած է առեւտրական բանուկ հրապարակ մ'ըլլալ այսուհետեւ: Քարիւղի սնտուկն որ առաջ հոս 2 մէճիտի կ'ծախուէր, մօտերս 1½ մէճիտի պիտի վաճառուի: Առեւտրական ծանօթ տուն մը որ 10,000 սնտուկ քարիւղ յանձնարարած էր Կարսի իր գործակալին, դեռ ապրանքն հոս չհասած՝ կ'իմանանք Թէ արդէն չահով ծախուած է Բաղէշեցի վաճառականներու: Հաղորդակցութեան այս դիւրացուցիչ միջոցով օսմ. և ռուսական ներածելի ու արտածելի ապրանաց փոխանակութեան նոր ոգեւորութիւն մը կ'սկսի: Այսուհետեւ փոխանակ ՊաԹում—Տրապզոն ուղեգծով Թուրքաստանէն ապրանք ստանալու, Կարնոյ վաճառականք ի վիճակի պիտի ըլլան ուղղակի Կարսի գծով հարկ եղած յանձնարարութիւններն ընելու:

*** Բիւզանդիոնի 811 Թուոյն մէջ Նանսիի Համալսարանին Տնօրէնութեան կողմէ առ Պատ. Խմբագրութիւնդ ուղղուած պաշտօնական նամակէ մը կ'տեղեկանանք Թէ նոյն համալսարանի բժշկական ճիւղը մտնել փափաքող ուսանողք զերծ պիտի կացուցուին Դպրութեանց և Իմաստասիրութեան [Lettres. Philosophie] դասական միջնակարգ ուսմանց մտից քննութիւն անցնելէ, եԹէ... վկայական մը բերեն կեդր. վարժարանէն, Պէրպէրեան վարժարանէն, ՂալաԹա-Սէրայի Լիսէէն և Ռոպէրթ Քոլէճէն:—Սանասարեան վարժարանի ընԹացաւարտներն եւս, առանց մտից քննութիւն անցընելու, ընդունուած են և կ'ընդունուին Պերլինի, Միթվայտայի, Ցիւրիխի, Ժընէվի, Մարսէյլի և այլ համալսարանաց մէջ, հետեւելով մասնագիտական ուսմանց և կամ արհեստագիտութեան:

*** Քաղաքիս մէջ Հայ-բողոքականներու յատուկ երեք վարժարաններ կան.— 1. Մանչաց արական բարձր. վարժարան. 2. Մանչաց իգական բարձր. վարժարան. և 3. Մանչաց երկսեռ Մանկապարտէզ: 103ի չափ երկսեռ որբերն ալ ասոնց մէջ տեղաւորուած են:

Ամսոյս 21ին սկսան նոյն վարժարանաց տարեկան հրապարակային հարցաքննութիւնք և վերջացան 24ին: Հարկ կ'համարիմ քանի մը խօսքով ամփոփել իմ տպաւորութիւններս: — Քննութեանց մեծագոյն մասին ներկայ գտնուելով՝ այն ընդհանուր համոզման յանգեցայ Թէ՝ այդ վարժարանաց մէջ միսիոնարական նոր վարչութիւնն Հայ և Հայ-բողոքական ուսանողներն իրենց ազգէն օտարացնելու համար բնաւ ջանք չի խնայեր: Ունկնդիրը կ'կարծէ Թէ ամերիկեան վարժարաններու մէջ կ'գտնուի: Անգլիերէնի քննութիւնք ամենամեծ տեղ մը գրաւած էին քննութեանց կարգացոյցին մէջ: Մանչաց իգական վարժարանի քննութեանց չորքին մէջ Հայերէնն իր բոլոր բովանդակ բացակայութեամբ կ'փայլէր արդէն: Երգուած երգերը մեծաւ մասամբ անգլիերէն էին. մանկապարտէզի պարերգներն ու երգերն Թուրքերէն ու անգլիերէն լեզուով. 4—7 տարեկան տղեկներու համար անմարսելի այս նորութիւններ կ'պակսէին միայն սա՛ դարավերջին. արդեօք ամերիկեա՞ն Թէ անգլիական հոգեբան մանկավարժներու կ'պարտինք այս նոր սխալը: Հայերէն երգերն եԹէ ծանօթ չեն մանկապարտիզպանուհիներուն, կրնան օգտուիլ յատկապէս այդ գործին համար պատրաստուող ազգ. մանկապարտէզներու վարիչ Տիկինէն. ամօթ չէ կարծենք իբերակրթութիւնը: Ս. Գրքի դասերը՝ [illegible] միայն կրնանք որակել. լաւ յիշողութիւն կ'մարզեն, դատողութիւնը գործ չունի երբեք այդ դասին մէջ: Ինքզինքս կ'կարծէի անչունչ ձայնագրի մը առջեւ, որ բառ առ բառ, նոյնութեամբ կ'արտասանէ ուրիշի մը խօսքերը: Անկեղծ ըլլալու համար ըսենք սակայն որ կային դասեր ալ, որք բաւական խնամով աւանդուած էին. մաթեմաթիկի քննութիւնէն բոլոր հանդիսականք գոհ մնացին. յուշել կը մանաւանդ իգական վարժարանի աչակերտուհեաց հայ լեզուով երգած հրաժեշտի երգը, որ ծափահարուեցաւ բոլոր ներկաներէն: Յունիս 24ին Եռ. օր ժողովարանի մէջ կատարուեցաւ Մանչաց իգական վարժարանի այս տարուան 7 ընԹացաւարտուհիներու վկայականաց բաշխման հանդէսը: Ի միջի այլոց ներկայ էին տեղւոյս կըրթական Նորընտիր Տնօրէն Մուրատ պէյ՝ ոստիկանութեան Գ. կարգի Գործակալ (Գոմիսէր) Օննիկ էֆ.ի հետ. ամերիկեան Պ. Հիւպատոսն և այլք: Սոյն հանդէսէն առաջ ընթացաւարտուհիները քննուեցան բուսաբանութեան և բնագիտութեան մէջ, աւելի կամ նուազ յաջող պատասխաններ ստացուեցան և գործնական մէկ քանի փորձեր (անչուշտ ժողովուրդը շլացնելու համար) տեղի ունեցան: «Հուսկ բանք»ը խօսեցաւ Պատ. Տօմպլեան՝ բաւական յուզիչ չեշտերով:

Չենք կրնար միւս կողմէ բոլորովին լռութեամբ անցնիլ քննութեանց ժամանակ ծագած խնդրոյ մը վրայ զոր յարոյց բողոքականաց Ազգապետ էֆ.ն հրապարակաւ քննադատելով արական վարժարանին մէջ պաշտօնավարող Հայ ուսուցիչ մը, որ քննութիւններէն իսկ առաջ արդէն պաշտօնանկուած էր ուրիշ Հայ ուսուցչի և ... Հայ տնտեսի մը հետ.... Հայ ըլլալուն (և ո՛չ բողոքական) յանցանօք: Բողոքական երիտասարդութիւնն իսկ զայրոյթ զգաց: Այս մասին և Նոր միսիոնար Մր. ՄՃէյփըլԹընի քմահաճ վարչութեան նկատմամբ աւելի ընդարձակ պիտի գրուի: Դժգոհութիւն սկսած է արդէն Հայ-բողոքականաց մեծամասնութեան և այդ կարծրամիտ ու կարծրամօրուս միսիոնարի և միւս աննշան փոքրամասնութեան միջեւ:

ԴԻՏՈՂ.

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ.— Կ'արժէ ընդարձակ տեղեկութիւններ տալ Ֆրանսայի Ազգային Տօնին առԹիւ, որոյ հանդէսը նկարագրութիւնն ըրին հեռագիրք: Այս տարւոյ մէջ պատահած ներքին դէպքերուն պատճառաւ մասնաւոր չահեկանութիւն մը կ'ընծայէր Յուլիս 14ի օրը Ֆրանսայի համար: Հանրապետութեան Թշնամիները մեծ յոյս դրած էին նոյն օրուան վրայ, եւ սակայն յուսախաբ եղան բոլորովին: Ֆրանսական հանրային կարծիքը վերջին տարիներու մեծ փոփոխութիւններ կրած է, եւ ո՛րչափ փողոցային ցոյցեր ու չփոթութիւնք քաջալերուին, Ֆրանսացւոց ստուար մեծամասնութիւնը համոզուած է Թէ ներկայ կառավարական ձեւն

ամէնէն յարմարն է բաղդատմամբ ապագայ յայտերու կամ քանի մը երազատեսներու գաղափարին որով իբր թէ պիտի վերանորոգեն զՖրանսա եւ անոր պիտի տան իր նախկին հաւակն ու կշիռը միջազգային քաղաքականութեան մէջ։ Տնտեսապէս և բարոյապէս Ֆրանսա աւելի յառաջադէմ կը գտնուի Հանրապետութեան օրով քան անկէց առաջ. մանաւանդ որ Ալզաս—Լոռէնի կորուստը Հանրապետականէն տարբեր դրութեան մը օրով տեղի ունենալով, Ֆրանսացիք կ՚մոռնան Հանրապետութեան յաղթանակներուն վրայ այս դարուս սկիզբը, Ա. Նաբոլէոնի վարչութիւնն ալ նկատելով իբրեւ պսակում մը հանրապետական սկզբունքներուն որոց ծագէն դուրս ելաւ ինք Նաբոլէոն Ա. և Հանրապետութեան օրերուն զօրավարներով եւ զինուորներով լայնեց, ընդարձակեց զՖրանսա նիւթական եւ բարոյական սահմաններուն մէջ։ Այս տեսակէտով միշտ անյաջող պիտի ըլլան Հանրապետութեան թշնամիք իրենց փորձերուն մէջ, ինչպէս տեսնուեցաւ Տէրուլէտի — հայրենասիրութեան ա՛յդ տեսակ մը կենդանի կուռքին— յանդուգն փորձէն։

Ուրբաթ աւուր թուով կ՚հեռագրին Բարիզէ.—«Հանրային զուարճութեանց յաջողութեան էն կարեւոր պայմաններէն մին է օդը, որ քիչ անգամ կրնար յարմարագոյն ըլլալ քան այսօր Ազգային Տօնին համար։ Ցուլիսի արեւը մերթ կ՚ծածկուէր վաղանցիկ թեթեւ ամպերու տակ, և ջերմութիւնը կ՚բարեխառնուէր արեւմուտքէն փչող ախորժելի զեփիւռով մը։ Թէեւ բարձր դասակարգի չատ մարդիկ, սովորականին պէս, Բարիզէ մեկնած էին դէպ արուարձանները, խուժանին տուած նեղութիւններէն խոյս տալու համար, ֆրանսական մայրաքաղաքը դիտելու արժանի տեսարան մը կը պարզէր։ Բարիզցիներուն մեծագոյն մասն եկած էին այս Հանրապետական հանդիսութիւնը դիտելու իբրեւ պարզապէս տօնական օր մը։ Ամէնէն մեծ հրապոյրն է Մեծ Զօրահանդէսն ի Լոնշան։ Կէս օրէ սկսեալ պուլվարները գրեթէ ամայացան, զի ով որ կարող եղած է քարդ մը ձեռք ձգել հանդիսատես ըլլալու համար զինուորական հքեղ հանդէսին, գացած է ի Լոնշան, և բիւրաւոր անձինք, որք այդ չնորհէն զուրկ մնացած էին, Պուլոնի անտառը գացին ծափահարելու զինուորներն երբ կ՚անցնէին խիտ կարգերով, վայելուչ կարգապահութեամբ և ոսկեճամուկ համազգեստներով։ Ուրիշ հազարաւորներ Ելիզէի Դաշտը գացած էին տեսնելու Հանրապետութեան Նախագահը, պետական բարձրաստիճան պաշտօնատարներըն և դեսպանական մարմինը, որ անհ ճամբայ պիտի ելլեն դէպի Լոնշան։ Նախագահ Լուպէ ընկերակցութեամբ նախարարապետ Վալտէք Ռուսոյի, իր զինուորական տան պետ Զօր. Պայյուլի և նաւային տեղակալ Հիւկէի, ժամ 2ին մեկնեցաւ Ելիզէի պալատէն։ Նախագահական կառքն աչքի զարնող հակապատկեր մը կը կազմէր հետեւորդ նախարարներուն և պետական աստիճանաւորներուն կառքերուն հետ։ Ճամբայ կ՚բանային բազմաթիւ զինուորք։ Նախագահին կառքին մօտ կային միայն չորս նիզակաւոր՝ Վիշապազօրաց գունդէն, երկուքը կառքին առջեւէն և երկուքն ետեւէն։ Միւս կառքերն ընդհակառակն շրջապատուած էին զինուորական ստուարթիւ խումբերով։ Պոմո հրապարակին և Մարինի ծառուղիին վրայ Նախագահը ծափահարուեցաւ խուռն բազմութենէ մը. հազարք հազարաց ճամբուն երկայնքը կեցած կ՚ողջունէին զինքը «կեցցէ՛ Լուպէ» աղաղակներով և «կեցցէ բանակը» ձայներով։ Նախագահն այսպէս մտաւ Լոնշանի շրջափակը, ուսկից ո՛ եւ է դէպքի։ Ժողովուրդն արդէն իրենց տեղերը բռնած էին բեմերուն եւ բարձրաւանդակներուն վրայ և կ՚հրանային իրենց առջեւ գտնուող զօրաց կարգերուն վրայ։ Երբ Լուպէ Նախագահական բեմին մօտ հասաւ, ուր արդէն հաւաքուած էր դեսպանական մարմինը, հանդիսատեսներուն մէկ մասը գոչեց.— «Կեցցէ Լուպէ», բայց Ազգայնական և Միապետական երեսփոխաններու խումբ մը, որ կեցած էր երեսփոխաններու յատկացուած բեմին վրայ, Նախագահին ճիշտ ալ կողմը, գոչեց. — «Կեցցէ բանակ։» Հինգ վայրկեան այսպէս չարունակեց, և թէեւ հասարակութիւնը չմասնակցեցաւ այս փոքրիկ ցոյցին, խոհեմութիւն համարուեցաւ իսկոյն չատցնել Նախագահական պահնորդներուն թիւը։ Ցետոյ սկսաւ Զօրահանդէսը. ամէնուն ուշադրութիւնը կեդրոնացաւ զօրաց վրայ։ Ինչպէս կ՚սպասուէր, Զօրահանդէսին էն չահեկան մասն էր Սենեկալցի նետաձիգներուն և Մառչանի ներկայութիւնը։ Ամէն Ֆրանսացի զօրահանդէսին գացած էր զանոնք ծափահարելու խորհուրդով, և անոնց գտած խանդավառութիւնը գերազանցեց նոյն իսկ Մառչանի ակնկալութիւնը։ Երբ կ՚անցնէին, միաբերան աղաղակ մը.—«Կեցցէ՛ Մառչան» թռաւ ամէն բերաններէ։ Ծափերը կ՚որոտային ամէնուստ, մինչեւ որ Մառչան և իր սեւամորթ քաջ ընկերներուն տողանցութիւնն անհետ եղան հանդիսատեսներուն աչքէն։ Հիանալի՜ տեսարան։ Այդ միջոցին Հանրապետութեան Նախագահն ալ ոտքի վրայ գլխարկը վերցուցած էր ի պատիւ այդ սակաւաձեռն սեւամորթ գունդին և իր սպաներուն։ Սենեկալցիք բարձրահասակ, նրբաւարտ լաւ մարզուած մարդիկ էին, և անոնց զինուորական գնացքն ու ընդհանուր վարմունքը պատիւ բերին իրենց սպաներուն։ Անոնք սովորաբար Սենեկալցի կ՚կոչուին, բայց իրօք Սուտանցի են և կը վերաբերին Պամպարա ցեղերին, որ կ՚տարածուի Բիգոյէ մինչեւ Նիկեր, և նոյն իսկ մինչեւ Սիքասօ։ Անոնց մարթն ածուխի պէս սեւ է։ Զօրահանդէսն աւարտեցաւ գրեթէ ժամ 4½ին։ Զօրահանդէսի միջոցին զօր. Կալիֆէ զինուորական համազգեստով միւս նախարարներուն հետ նստած էր նախագահական բեմին վրայ։ Իր մօտ գտնուողները կ՚դիտէին թէ ինչ ծայրայեղ ուշադրութեամբ կ՚հետեւէր զօրաց շարժումներուն։ Զօրահանդէսէն ետք Հանրապետութեան Նախագահը պատուանշաններ բաշխեց։ Երբ քաշուեցաւ, Ազգայնական երեսփոխանք փոքրիկ ցոյց մ՚ալ ըրին, բայց ժողովուրդն ընդհանրապէս համակրութիւն կ՚յայտնէր գոչելով.—«Կեցցէ Լուպէ։» Սակայն պէտք է ըսել որ Հանրապետութեան Նախագահին անցքը չէր արթնցուցեր սովորական խանդավառութիւնը։ Ելիզէի դաշտերուն վրայ ալ Լուպէ ի դարձին չգտաւ մեծ ոգեւորութիւն մը։ Տէրուլէտ և Մառսէլ Հաբէռ ամէն ջանք ըրին դէպքեր առաջ բերելու համար։ Զօրահանդէսի գացած ատեննին, իրենց կուսակիցներէն ծափահարուեցան, և ի դարձին մասնաւոր կարգադրութեամբ համախմբուած ազգայնական երիտասարդներէ ողջունուեցան, Ցաղթական կամարին մօտ։ Ազգայնականք հետեւեցան գնդապետ տ՚Ապովիլի վաշտին մինչեւ զօրանոցին դուռը, «կեցցէ բանակ» աղաղակներով։ Ցուցարարք ամէնէն աւելի իրենց կոկորդը մաշեցուցին Օբերայի հրապարակին վրայ, Զինուորական Քլիւպին դիմաց, և իրենց ցոյցը թերեւս տարբեր երեւոյթ մը առնէր, եթէ տեսնէին զՄառչան՝ որ Քլիւպին պատշգամին վրայ դրօշի մը ետեւ ծածկուած տեսարանը կ՚դիտէր և ականջ կ՚կախէր «կեցցէ Մառչան և կեցցէ բանակ» փոխադարձ աղաղակներուն։ Փողոցներու մէջ բարեկարգութիւն պահպանելու համար խիստ նախզգուշական միջոցներ ձեռք առնուած էին։ Բարիզի ամբողջ ոստիկանութիւնը շարժման մէջ դրուած էր. մօտակայ նահանգներէն հեծեալ ոստիկաններ ապսպրուելով Պուլոնի անտառին մէջ դրուած էին, և Հանրապետական բոլոր Պահնորդներն Ելիզէի պալատէն մինչեւ Լոնշան երկու կարգի վրայ շարուած էին, բայց մարդոց աչքին չէին երեւիր կարելի եղածին չափ, ժողովրդային գրգռում մը առաջ չբերելու նպատակաւ։ Գիշերային հրախաղութիւնք և լուսավառութիւնք ամէն տարիներու պէս էին։ Հրապարակներու վրայ պարողներու խումբն Ազգային Տօնին յատկանշական պատկերներէն մին էր։ Բարիզի գրեթէ ամէն թաղերուն մէջ պարահանդէսներ կային, տօնավաճառներ կազմակերպուած էին, ուր ժողովուրդը զանազան զբօսանքներու կ՚պարապէին։ Առաջներն ամէնէն աւելի ժողովրդական զբօսանքն էր փայտեայ ձիերուն հանդէսը։ Հիմակ անոնց տեղ անցած են փայտէ խոզեր, եզներ, խնչափառներ և ուրիշ տարօրինակ դէմքով արարածներ որք ոեւէ բառարանի մէջ անուն չունին, և ո՛չ միայն կ՚դառնան ամէն ուրեք, այլ արագութեամբ կ՚չարժին դէպ ի վեր, դէպ ի վար, կ՚խորասուզին, իրենց վրայ հեծնողներուն վտանգ պատճառելու աստիճան։ Ոչ միայն տղաք այլ չափահաս մարդիկ ալ կ՚մասնակցէին այս զուարճութեանց»։

—Զօրահանդէսէն ետք Նախագահ Լուպէ հետեւեալ նամակն ուղղեց Կալիֆէ զօրավարին.— Սիրելի նախարա՛րս, Զօրահանդէսն որուն քիչ առաջ ականատես եղանք, անգամ մ՚ալ ցոյց տուաւ թէ Բանակին մարզանքը, կացուցիչքը, կարգապահութեան ոգին պակասութիւն չունին բնաւ։ Մայրաքաղաքին զօրաց հետ քով քովի քալելը տեսանք Ափրիկէի և Սուտանի իրենց զինակից եղբայրներուն, որք երեք տարի տեւող պատերազմի մը միջոցին քաջարար կրեցին եռագոյն դրօշը։ Ծափերն որք ողջունեցին մեր զինուորական վարժարաններուն աշակերտները, մեր ամէն կարգի զինուորները, զՄառչան հազարապետ և իր արիագունդ ընկերները, վկայ են բարձրաբարբառ թէ Ֆրանսա վստահութիւն ունի իր ազգային բանակին վրայ։ Առաջին անգամ ըլլալով կարող եղանք ցոյց տալ մեր հայրենիքին այն նոր թնդանօթներն որք հանրապետական կառավարութեան և ձեր նախորդ նախարարներուն ջերմեռանդ հոգածութեան առարկայ եղան։ Շնորհիւ գործակցութեան Խորհրդարանին որ քուէարկեց բոլոր հարկաւոր վարկերը, շնորհիւ հրամատարներուն եւ իրենց ամէն կարգի ստորակարգեալներուն, կրնանք հպարտանալ ա՛յնքան չուտ ձեռք բերուած արդիւնքին վրայ։ Կ՚խնդրեմ, սիրելիդ իմ նախարար, իմ ամենախորին գոհունակութիւնս, եւ նաեւ կառավարութեան ու Հանրապետութեան գոհունակութիւնն հաղորդեցէք Բարիզի զինուորական կառավարչին եւ Բանակին որ այսօր տողանցութիւն կատարեց ի Լոնշան։

«ԼՈՒՊԷ.»

— Ազգային Տօնին առթիւ իրենց պաշտօնին մէջ վերահաստատուեցան Թղթատարի բոլոր ցրուիչներն որք հրաժարեցուցած էին իրենց գործադուլին պատճառաւ։

ԳԵՐՄԱՆ ԿԱՅՍՐՈՒՀԻՆ ոտքը ճըմլեցաւ դէպ ի լեռը զբօսական պտոյտ մը կատարած ատեն։

ՃԱՊՈՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ. —Նախընթաց օրէն գործադրուիլ սկսան Ճապոնի և եւրոպական պետութեանց միջեւ կնքուած առեւտրական դաշնագրերը։

ՓԻԼԻՊՊԵԱՆՔ.— Ուաշինկդընէ կը հեռագրուի թէ Ակինալտօ և իր պետերէն ոմանք հաշտութեան կնքելու սկզբնաւորութիւն ըրած են Օդիս զօրավարին մօտ։

ԶԱՐԵՒԻՔԻՆ ՄԱՀԸ.—Լա Հէյի Խաղաղութեան Դեսպանախորհրդոյ հօլանտացի պատուիրակն յանուն իր բոլոր պաշտօնակիցներուն ցաւակցութիւն յայտնեց Եօրկէյ մեծ դուքսին մահուան առթիւ։ Պառօն Ստալ չնորհակալ ըլլալով, ծանոյց թէ Զարին պիտի հաղորդէ Դեսպանախորհրդոյ վշտակցութիւնը։

—Մայր Կայսրուհին, Միխայէլ Ալեքսանդրովիչ, Ալեքսիս Ալեքսանդրովիչ և Ալեքսանդր Միխայէլովիչ Մեծ Դուքսերը, նաեւ Քսենիա և Օլկա Ալեքսանդրովնա Մեծ Դքսուհիները Գչ. օր Պոթում մեկնեցան, Մեծ— Դուքսին մարմինը դիմաւորելու։

ԳԵՐՄԱՆ ՆԱԽԱՏՈՐՄԸ.—Այս տարի Ռոյխսդակին կողմէ վաւերացեալ չորս մեծ զրահաւորներուն չինութիւնը պիտի սկսի Վիլհէլմսհավընի, Էլպինկի, Շդէդդինի և Դէկէլի նաւարաններուն մէջ։ Նախընթաց օր, Գչ., ի Պրէմ ծով իջնուեցաւ նոր դրութեամբ առաջին փոքր յածանաւն որոյ մեքենաները ինն հազար ձիու ոյժ ունին և ժամը քսան և մէկ մղոն արագութիւն ունի։ Ցածանաւը պիտի սպառազինուի նորագոյն դրութեամբ, և 211 նաւաստի պիտի ունենայ։

ՄԱՐՍԻԼԻԱՅԷ կ՚հեռագրուի թէ ֆրանսացի և իտալացի գործաւորներուն միջեւ կռիւ մը տեղի ունենալով, երկու ֆրանսացի գործաւորներ վիրաւորուած են։ Ժողովուրդը խիստ գրգռուած է Իտալացիներուն դէմ։ Կրետէի մէջ եւս Ցուլիս 14ի ազգային տօնին առթիւ իտալացի և ֆրանսացի զինուորներուն միջեւ կռիւ և մահ պատահեցան, ինչպէս արդէն գրեցինք։

ՍԵՐՊԻՈՅ նախորդ դեսպանն ի Բետերսպուրկ, Սավա Կրուիչ զօրավար, մեկներ է Բեդրբուրկէն։ Բայց Սերպիա պիտի չդառնայ։

ՍԷՍԻԼ ՌՈՏՍ Բարդաւոն ժամաներ է Ցուլիս 18ին։

ՍԵՒ ԼԵՌ ԵՒ ՍԵՐՊԻԱ. — Համիտ Բարօլօ Ռոմանօ թերթը Սեւ Լերան կառավարութեան կողմէ Համիտ իր ներկայացուցիչին զրկուած պաշտօնական հեռագիրը կ՚հրատարակէ, յայտարարող թէ Սեւ Լերան իշխանական ընտանիքին ոեւէ մէկ անդամը մաս չունի բնաւ Պելկրատի դէպքերուն մէջ։ Բացարձակապէս սուտ են այն զրոյցներ թէ դաւը կազմակերպուած է ի Ցեդինէ։

ԴԷՊՔԵՐՆ Ի ՍԵՐՊԻԱ.—Նովի Օնէվնի Լիստ արմատական թերթին խմբագիր Կլիգա Ռէնէէրովիչ ձերբակալուեցաւ պատերազմական ատենին հարցաքննիչ դատաւորին հրամանաւ։ Թերթին հրատարակութիւնը դադրեցաւ։

—Պելկրատի պաշտօնաթերթը նախարարական զեկոյց մը հրատարակելով, կ՚հերքէ այն զրոյց թէ Սերպ կառավարութիւնը ներում խնդրած ըլլայ Սեւ Լերան իշխանական ընտանիքէն Բեգրովիչի ձերբակալման համար։ Բեգրովիչ բնաւ ձերբակալուած չէ արդէն, և հետեւաբար ներման պատճառ ալ չկայ։

ՏՐՄ-ՏՐՄ ԳՆՏԱԿՆԵՐՆ ԵՒ ԱՆԳԼԻԱՑԻՔ.— Անգլիական կառավարութիւնն երեսուն խորտընկէց զրկեց Հարաւային Ափրիկէ, որոց իւրաքանչիւրը մէկ վայրկենի մէջ չորս հարիւր Տրմ Տրմ գնտակ կ՚արձակէ։ Երեսփ. Ժողովոյ մէջ, այդ խնդրոյ առթիւ բաւական խառնակից վիճաբանութիւն մը հանեց իռլանտացի երեսփոխան մը։ Պատերազմական գործոց խորհրդականը խոստովանեցաւ թէ անգլիացի զինուորներն իրօք այդ գնտակները կ՚գործածէին, բայց նա անորոշ եւ խուսափողական կերպով խօսեցաւ եւ պատասխանեց այն հարցմանց որք իրեն կ՚ուղղուէին այդ գնտակներու տեւանքներուն և Լա Հէյի դեսպանախորհրդոյն այդ գնտակներուն մասին ունեցած վիճաբանութեանց և որոշմանց վրայ։ Անգլիական կառավարութեան վարուելու եղանակը դատելէ առաջ, կ՚արժէ իմանալ թէ ի՛նչ է Տրմ Տրմ գնտակը։ Լի Մեդֆորդ հրացանն հազիւ երեւցած էր Աֆղանստանի սահմանագլխին վրայ — Աֆրիտներու ապստամբութեան ժամանակ — երբ տեսնուեցաւ թէ այդ հրացանի գնտակները չատ ազդեցիկ չէին, ինչպէս եւրոպական ազգերու հռամիգ՝ բայց բարակ հրացանները, այդ անգլիական նոր հրացանն ալ հեռուէն բաւական ազդեցիկ էր, սակայն մօտէն — 100 մեդր և աւելի պակաս — մարդու մարմնոյն վրայ կանոնաւոր վէրք մը կ՚բանար, այնպէս որ վիրաւորուող անձը դեռ կարող էր ճամբան չարունակել և կռուիլ. յետոյ իրաւ է թէ վէրքն աւելի ցաւալի կ՚ըլլար, բայց չատ դիւրութեամբ կ՚առողջանար։ Այս պակասութեան առջեւն առնելու համար, մի քանի հնարքներ մտածեցին։ Նախ սկսան այդ գնտակին նիքելէ ծածկոցն հանել. մնացած գնտակը՝ այն յատկութիւնն ունի որ, երբ ո՛ եւ է դիմադրութեան մը հանդիպի՝ երկու մասի կ՚բաժնուի՝ կապար եւ ծածկոյթ։ Կապարն անկանոն կերպով տարածուելով բաւական լայն և անբուժելի վէրքեր կ՚պատճառէ, իսկ ծածկոցն ետին մնալով մարմնոյն մէջ կ՚մնայ և վէրքը [illegible]։ Բայց բարբարոսութեան չաւղին մէջ սա՛ առաջին քայլն էր, աւելի աւելին կար։ Վագրներն սպաննելու համար, Լի Մեդֆորդի գնտակները քիչ մը բարեփոխուած էին անոնց մահացուցիչ զօրութիւնն աւելցնելով։ Քանի որ վագրներուն վրայ այնքան լաւ յաջողութիւն կ՚գտնէին, մարդոց վրայ ալ նոյնը կարելի էր գտնել, մտածեցին մարդասէրները. ուստի այդ գնտակներէն չատ մը չինել տուին Տըմ-Տըմի գործարանին մէջ, անհ այս է Տըմ-Տըմ գնտակներու ծագումը։ Գնտակի ձեւը չատ անգամ փոխուած է, բայց միշտ նոյն բանն է։ Կ՚կոյանայ յիշեալ ձեւերն մէջ, այսինքն երկարացած կապարեայ գնտակ մը որուն ծածկոցը կարծր է և հաստ ծայրն երկուքի բաժնուած է։ Երբ գնդակն իր ուղղուած տեղն հասնի, հովանոցի մը պէս կ՚բացուի և «stops its men»— «իր դպած մարդոց գործը կ՚լմցնէ»— ինչպէս կ՚ըսեն Անգլիացիք, չատ լայն և անբուժելի վէրք մը բանալէ յետոյ։ Ոսկրները կ՚կոտրտին, մսերն ամէն կողմերէ կ՚պատառին և մարդը չանթահար գետինը կ՚իյնայ։ Վեց հազարորդամէտր տրամագծով և 3 սանդիմէտր երկայնութեամբ Տրմ Տրմ գնտակ մը փոխանակ 6 հազարորդամէտր ծակ մը բանալու, 6 սանդիմէտր ծակ մը կ՚բանայ առանց հաշուելու իր անկանոն պատառուածքները։ Անգլիացիք Տրմ-Տրմներն ապստամբ Աֆրիտներուն դէմ գործածելէն յետոյ, երբ տեսան անոնց լաւ հետեւանքը, զանոնք գործածեցին նաեւ Սուտանի պատերազմին մէջ։ Այս ըսել չէ թէ քանի մ՚անգամներ բողոքներ չբարձրացան այդ գնդակներուն դէմ որք անարժան են քաղաքակիրթ ազգի մը։ Ֆրանսացի Իպլեռ երեսփոխանն այդ մասին հարցապնդում մ՚ըրաւ Ֆրանսայի Երեսփ. Ժողովոյ մէջ։ Անգլիոյ Երեսփ. Ժողովոյ մէջ ալ քանի մը անգամներ բողոքներ լսուեցան։ Անգլիական կառավարութիւնը միշտ պատասխանած է թէ Բեդերսպուրկի դաշնագրութիւնն (1868 Դեկտ. 11) արգիլած է պայթող գնտակներու գործածութիւնն և ո՛չ տարածուողներուն. արդ Տրմ-Տրմներն այս վերջիններէն ըլլալով և ոչ մէկ միջազգային արգելքի տակ կ՚իյնան։ Այդ պատճառաբանութիւն բոլորովին փարիսեցիական է, վասնզի Բեդերսպուրկի դաշնագրութիւնը պայթող գնտակները, անոնց պայթող ըլլալուն համար չէ որ արգիլած է, այլ անոնց հետեւանքին համար։ Արդ, Տրմ-Տրմներուն հետեւանքը միեւնոյն ըլլալով՝ ինքն ըստ ինքեան արգիլուած է։ Լա Հէյի Դեսպանախորհրդոյ մէջ բոլոր պատուիրակները բողոքեցին Տրմ-Տրմի դէմ բացի սակայն Անգլիոյ եւ Աւստրեւհունգարիոյ պատուիրակներէն։ Դեռ չի գիտցուիր թէ Դեսպանախորհրդոյ որոշումն ի՛նչ է. բայց այդ խնդրով զբաղելնին արդէն բարոյական մեծ զօրութիւն մ՚ունի։ Մինչեւ այսօր Անգլիացիք ուրիշ առարկութիւն մը կ՚ընէին, ըսելով թէ Տրմ-Տրմներն կարելի չէր ճերմակներուն և քաղաքակիրթներուն դէմ գործածել, բայց վայրենիներուն դէմ հարկաւոր էր ամէն միջոցներով պաշտպանուելու և զանոնք սարսափեցնելու համար։ Այս աճռելի պատճառաբանութիւն եւս զօրութիւն չունի, քանի որ զօրաց Տրմ-Տրմ կ՚ուղարկեն որք հաւանականաբար Պօէրներու դէմ պիտի կռուին, որք ճերմակ և քաղաքակիրթ են։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Եմէնի նահանգին Ասիր գաւառին կառավարիչ անուանուեցաւ կայս. Ե. զօրաբանակին գնդապետներէն Ռիֆաթ պէյ։ Սուրիոյ նահանգին Պալպէք գաւառակին գայմագամ անուանուեցաւ Պէրութի Ճէպէլէ գաւառակին գայմագամ Շէհապ պէյ, որուն յաջորդեց Պաալպէքի գայմագամ Աճմի էֆ.։

Պրուսայի նահանգին Այվալըգ գաւառակին գայմագամ անուանուեցաւ Պէրկամայի գայմագամ Ճավիտ պէյ, որուն յաջորդեց Կիրասոնի գայմագամ Իպրահիմ Լութֆի պէյ։ Կիրասոնի գայմագամ անուանուեցաւ Այվաճըգի գայմագամ Զիյա պէյ։

—Բ. Մեճիտիէ պատուանշան տրուեցաւ Օսմ. կայս. Պանքայի Լոնտոնի ճիւղին տնօրէն Մ. Պարիի։ Ե. Մեճիտիէ՝ կօչկավաճառ հաճի Գառնիկ աղայի, որ կայսերական իշխան Ապտիւր Ռահիմ էֆ.ի թլփատութեան հանդէսներուն առթիւ կօչիկ մատակարարած էր։

Ա. Շէֆագաթ՝ Սեւ-Լերան վարչապետ Մ. Բէգրովիչի կնոջ, և Արտաքին գործոց Նախարար Ճէլէտօբրովիչի կնոջ. Բ. Շէֆագաթ՝ Օսմ. կայս. Պանքայի Լոնտոնի ճիւղին տնօրէն Մ. Պարիի կնոջ։

ՄԷՎԼՈՒՏԻ ՏՕՆԻՆ առթիւ, բոլոր պաշտօնաւոր ու անպաշտօն նախարարք, Միւշիրք, Իւլէմայք և այլ պետական աստիճանաւորք, այսօր ըստ սովորութեան կայս. Պալատ երթալով, իրենց չնորհաւորութիւնները պիտի մատուցանեն յառ կայս. Գահոյից։ Կայս. Պալատան մէջ այսօր մեծ հանդէսով տեղի պիտի ունենայ Մարգարէին ծննդաբանութեան ընթերցումը։

—Մէվլուտի տօնին ի պատիւ, Բ. Դուռն երեք դրամական ողորմութիւններ բաշխեց իսլամ աղքատներուն։

—Երէկ, ինչպէս կեդրոնական բանտէն և Սկիւտարի ու Բերայի բանտերէն, նոյնպէս գաւառական բանտերէն ազատ արձակուեցան այն բանտարկեալք, որք իրենց պատժոյն երկու երրորդ մասն արդէն քաշած էին։

ԿԱՅՍ. ՆԵՐՈՒՄ. — Վեհ. Սուլթանը ներում չնորհեց Թէօտոր Նօրկի անուն անձին որ Գօսովայի մէջ բանտարկուած էր ա՛յն ամբաստանութեամբ թէ իր տան մէջ աւազակներ կ՚հիւրընկալէր և ի հարկին դիւրութիւններ կ՚ընծայէր անոնց։

ՄԱՆՐՈՒՔ ԴՐԱՄ. — Արդէն ծանուցինք թէ Օսմ. կայս. Պանքան կայս. Իրատէով արտօնուած էր 50,000 ոսկի մանր արծաթ դրամի վերածելու։ Արքունի Փողերանոցն երեկ սկսաւ կտրել 1 և 2 ղչ.նոց արծաթ դրամներն, և քիչ օրէն Պանքային տրամադրութեան տակ պիտի դնէ։ Ցետոյ պիտի սկսի 5 և 10 փարանոց մանր դրամներուն պատրաստութիւնը։

ԿԱՅՍ. ՇՆՈՐՀ.— Վեհ. Սուլթանը 9,450 ղչ. չնորհեց Քասթէմունիի նահանգին Կէօյնիւք գաւառակին Արըգ-Ջայըրը գիւղէն 7 գիւղացիներու, որպէսզի նորոգեն իրենց տուներն ու յարդանոցներն որք վերջերս փլած էին։

ԶԱՐԵՒԻՔԻՆ ՄԱՀԸ.—Պրուսայէ կը գրեն թէ Ցուլիս 4/16ին հոգեհանգստեան պաշտօն կատարուեր է տեղւոյն օրթոտոքս եկեղեցւոյն մէջ։ Տաճարին մէջ տեղը կանգնած էր մահարձ մը որոյ վրայ կ՚գտնուէր ռուսական թագը։ Ներկայ էին հիւպատոսական մարմինը, կուսակալին ներկայացուցիչք, Հայոց կողմէ Տ. Եփրեմ քհնյ. և ռուս գաղթականութեան անդամք։ Արարողութենէն ետք, ներկայք ռուսական հիւպատոսարանն երթալով, ցաւակցութիւն յայտնեցին դեր-հիւպատոս Մ. Բէրտիքքարիի։

ՌԷԺԻՒ Ցունիս ամսոյ հասոյթն եղած է 180,000 ոսկի։

ՎԵՐՋԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԸ.—Կայս. հրամանաւ յանձնաժողով մը կազմուած էր վերջերս պատահած յաճախակի հրդեհներուն պատճառներն ի վեր հանելու համար։ Ցանձնաժողովն ինչ ինչ տնօրինութիւններ թելադրած է, որք պիտի կրնան այս յաճախադէպ աղէտներուն առաջքն առնուլ և ոստիկանութեան պաշտօնը դիւրացնել։

ԶՕՐԻ կառավարիչն հրաման ստացաւ Պոլիս զրկելու այն ինն արձաններն որք գտնուեցան Բալմիրի (Թէտմուր) աւերակներուն մէջ։

ՊԱՂՏԱՏԻ ԳԻԾԸ.— Պաղտատ-Պասրայի գծին անցնելիք ճամբան որոշելու և յատակագիծը պատրաստելու համար, ինչպէս յայտնի է, Օգոստոսի մէջ ճարտարագէտներու յանձնախումբ մը պիտի մեկնի մայրաքաղաքէս։ Իգտամ կ՚իմանայ թէ Անատոլուի երկաթուղւոյ նախորդ Ա. երկրաչափ Մ. Հակէնպէրկ և Ֆրանս. Վիգալի Ընկերութեան ներկայացուցիչ Մ. Գար պիտի մասնակցին նոյն յանձնաժողովին, և թէ Ելմտական նախարարութեան խորհրդական Ռաֆի պէյ Գերման Պանքաներու Սէնտիքային մասնակից է եղեր։ Երկաթուղիի չինութիւններ ստանձնող Ֆրանս. Վիթալի ընկերութիւնն ալ համաձայներ է Անատոլուի Գերման ընկերութեան հետ, նոր գծերուն չինութիւնն ստանձնելու համար։ Իգտամ, որ այս լուրերը կ՚ուտայ, չըսեր թէ նոր գծին արտօնութիւնն որո՞ւ տրուած է, և ճարտարագէտներու յանձնաժողովն որո՞ւ հաշւոյն պիտի գործէ։

— Պերլինի Թակպլաթ լրագիրը, միւս կողմէ Պաղտատ—Պասրայի նոր գծին վրայ խօսելով, կ՚ըսէ թէ Տէօյչ-Պանքէն ու ֆրանսացի դրամատէրց խմբակէն զատ, մին ռուսական եւ միւսն անգլիական, երկու ընկերութիւնք եւս մէկ մէկ նոր ծրագիր մատուցած են կայս. կառավարութեան, որով առաջադրեալ նոր գծին մենաշնորհը կ՚խնդրեն, բայց գերման թերթին խօսքին նայելով, Գերման դրամատէրց ծրագիրն աւելի չահաւոր պայմաններ կ՚պարունակէ եղեր կայս. կառավարութեան համար, թէեւ յայտնի է որ բոլոր խնդրարկուներն ալ քիլոմեդրական երաշխաւորութիւն կը պահանջեն։ Սակայն կայս. կառավարութիւնն որոշած է նոր երկաթուղւոյն քիլոմեդրական հասոյթը չերաշխաւորել, քանի որ ցարդ չինուած գծերուն քիլոմեդրական հասոյթն երաշխաւորելով, ինք բնաւ օգուտ մը չէ տեսած, այլ բոլոր օգուտն օտար ընկերութիւնները վայելած են։ Հետեւապէս, իրոց այս վիճակին նայելով, Պաղտատ—Պասրայի գծին չինութիւնը դեռ չատ ժամանակի կարօտ է, մինչեւ որ խնդրարկուներէն մին, առանց երաշխաւորութեան, յանձն առնու չինութիւնը։ Սէրվէդ, նոր յօդուածով մը, քիլոմեդրական երաշխաւորութիւն տալու դրութեան դէմ խօսելով կ՚ըսէ. «Հարկ չկայ ըսելու թէ դրա՛մն է որ պատերազմ կ՚ընէ, և Թուրքիա պէտք չէ որ իր դրամական միջոցները վատնէ։ Պաղտատ Պասրայի մեծ գիծը, որ Թուրքիոյ համար պիտի ըլլայ այնպէս ինչպէս Անդրսիպերիական երկաթուղին Ռուսիոյ համար, պէտք չէ որ այս միլլոցս ծախք պատճառէ Պետական գանձուն»։

ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ որոշեց որ Տէրութեան քաղաքային ու զինուորական պաշտօնատանց մատակարարք և անոնց քարտուղարք ու հաւաքիչք եւս պարտին էսնաֆ թէզքէրէսի առնել։

ԷՎՔԱՖԻ նախարարութեան որոշմամբ, Քաղաքապետութիւնը պատուիրեց թաղերու Իմամներուն և Մուխթարներուն, որպէսզի երբ կալուածներու փոխանցման համար իլմուխապէրներ յանձնեն, որոշապէս նշանակեն թէ քանի՞ բաժինէ կ՚բաղկանան, մեռելոյ բաժին կա՞յ թէ ոչ, կալուածատէրն ո՞ղջ է կամ մեռած ևայլն։

ԲԱՐԻԶԷ կ՚գրեն թէ Հանրապետութեան Նախագահ Լուպէ մասնաւոր մեծարանքներ ըրեր է Օսմ. դեսպան Միւնիր պէյի, որ միւս դեսպանաց հետ չնորհաւորական այցելութեան գացած էր Ցուլիս 14ի Տօնին առթիւ։

ԱՆՑԱԳԻՐ. — Ջեռնհաս պաշտօնատունն որոշեց որ ուսանողներու, Շէյխերու և աղքատներու տրուելիք անցագրերը ;րուշմատուրքէ ազատ ըլլան։

ՆԱԽԱՀՈԳՈՒԹԻՒՆ. — Կայս. կառավարութիւնն՝ յառաջիկայ ձմրան մէջ ածխավաճառներու չահադիտութեանց առաջքն առնելու համար, այժմէն սկսած է կանխահոգ միջոցներ ձեռք առնել, մեծաքանակ ածուխ մթերելու համար մայրաքաղաքիս մէջ։ Այս մասին կարեւոր զեկուցումներ ըրած է Քաղաքապետութեան։

ՍԱՄՈՍԻ ԸՆԴՀ. Ժողովն երկու ուղերձներ քուէարկեց, որոց մին պիտի մատուցուի յառ կայս. Գահոյից և միւսը՝ Սամոսի իշխան Քոպղքի Վալյանի պէյի։ Ընդհ. Ժողովն, ըստ նոր օրէնքին կայս. վաւերացման համար իր երախտագիտութիւնը կ՚յայտնէ, և Վալյանի պէյի ալ իր չնորհակալիքը, անոր լուսամիտ վարչութեան համար։ Քոպղքի պէյ Վալյանի Ուղերձին պարունակութիւնը կայս. Պալատ հաղորդած է հեռագրով։

—Սամոսի ոստիկանութիւնը ձերբակալեց Իզմիրի Հայ վաճառատան մը այն անհաւատարիմ պաշտօնեան, որ իր տիրոջ 315 ոսկին չորթելով, չունչը Սամոս առած էր։

ՖԷՍԻ ԳՈՐԾԱՐԱՆ.—Վասիլիոս Միխալաքի անուն վաճառական մը տարօրինակ առաջարկ մ՚ըրած է կայս. կառավարութեան։ Առաջարկած է օտար երկրի մը չուլխայի գործարանին մէջ չինուած ֆէսերն, իբրեւ օսմ. արտադրութիւն, Թուրքիա ներմուծել և ասոր համար մենաշնորհ խնդրած է։ Սակայն կայս. կառավարութիւնը պատասխան տուած է թէ օտար երկրի մը մէջ հաստատուած գործարանի մը չի կրնար մենաշնորհ տալ։ Զարմանալի է որ ֆէսի մենաշնորհ խնդրողներուն ամէնքն ալ մին քան զմիւսն տարօրինակ առաջարկներ ըրած են ցարդ, այնպէս որ ցարդ ոչ ոք կրցաւ գործնական բան մը ընել, մինչդեռ Աւստրիոյ մէջ կազմուած Սէնտիքան իր չահաբեր գործը կ՚չարունակէ, թերեւս խնդալով մեր ձեռնարկուներուն անգործնական առաջարկներուն վրայ, որք ժամանակ վատնելու միայն կ՚ծառայեն։

ԳԱՂԹԱԿԱՆՔ.—Նախընթաց օր 200 է աւելի գաղթականք Վառնայէ մայրաքաղաքս եկան։ Նոյնքան թուով գաղթականներ, որք ասկից առաջ Պուլկարիայէ մայրաքաղաքս եկած էին, նախընթաց օր Ատաբազար և Էսկիչէհիր զրկուեցան։

—504 Իսլամ գաղթականք անցեալ կիր. օր Իզմիր հասան Միջերկրականէ։ 1300 գաղթականք ալ Իզմիրէ մեկնեցան Սուրիա երթալու համար։

ԱՐԿԱ՞Ծ ԹԷ ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ.—Նախընթաց օր, Ղալաթիոյ քարափին առջեւ խարսխող Մէսաժըրիի չոգենաւէն ծովն ինկաւ 35 տարեկան գերմանացի Հրէուհի մը որ յղի էր։ Մխտավաճառ Ճօրճի Բանեաթօ մեծ ջանքերով յաջողեցաւ ազատել կինն որ պահականոց տարուեցաւ։ Ցայտնի չէ տակաւին թէ այս դէպք արկա՞ծ մ՚էր թէ անձնասպանութիւն։

ՓԱԽՈՒՍՏ.—Զինուոր մը, որ Թէրսանէ կ՚փոխադրուէր իր գործած մէկ յանցանքը քաւելու համար, երեք առուտօ ինքզինք ծովը նետեց Մահսուսէի չոգենաւէն, երբ սա Հէյպէլի կղզիէն կ՚մեկնէր։ Շոգենաւն անմիջապէս կանգ առաւ, և նաւաստի մը հետեւեցաւ զինուորին զայն բռնելու համար, ու մինչ ալիքներուն մէջ կը փնտռէր զինուորը, նա Հէյպէլիի բլուրներէն վեր կ՚մագլցէր զուարթօրէն։

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ. — Ցունիս 28/10էն մինչև Ցուլիս 5/17, Պոլսոյ մէջ պատահած մահերուն թիւն յանգած է 203ի, որոց 2ը կեղծմաշէ, 3ն հարսանիքթէ, 1ը ծաղկախտէ, 3ը ժանտատենդէ և 8ը չնչափողերու ծանր հիւանդութիւններէ յառաջ եկած են։

ԱԼԻՒՐԻՆ գինը Ռուսիոյ մէջ 30 կոպէկի անկում մը կրած է։

ՆԻԿՈՄԻԴԻԱՅԷ կ'գրեն մեզ Յլս. 7 Թուով.—«Նախընթաց գիշեր Արսլանպէկցի Տինկիլ-օղլու Յովհաննէս անուն երիտասարդն, որ ուրիշ ընկերի մը հետ Գարա-Թէփէէ կ'վերադառնար ձիւն բերելով, ճամբան յարձակում կրեց արիւնկզակ Լազէ մը, որ թշնամութիւն կ'սածէր անոր դէմ, ջուրի խնդրոյ մը պատճառաւ։ Լազը դարանակալ եղած էր, և երբ իր հակառակորդին անցնիլը տեսաւ, որուն հետ քանի մ'օր առաջ բանակռիւ մ'ունեցած էր, իր ատրճանակին փողն անոր կռնակին ուղղեց և գնտակը ձախ թեւէն մտնելով բարեբախտաբար միւս կողմէն դուրս ելաւ։ Լազը կ'ծիկը դըրաւ. եւ երիտասարդը գիշերանց Իզմիտ բերուելով, յետ օրինական քննութեանց, տեղական իշխանութեանց կողմէ ղրկուեցաւ ի Պոլիս Ազգ. Հիւանդանոցին մէջ դարմանուելու։ Իզմիտի իշխանութիւնք ձիաւոր ոստիկաններ ղրկեցին չարագործ Լազին ետեւէն։

—«Պորտուգալցի ճարտար հիւսնկարէն պարոն Նշան, հայր զաւակաց, և որ ծովու բաղնիքի մը շինութեամբ կ'զբաղէր, երէկ իրիկուն ժամ 11ին միջոցներն իր հաւասարակշռութիւնը կորսնցնելով ծովը ինկաւ և խեղդամահ եղաւ։ Թէև անմիջական օժնութիւնք հասան, սակայն դիակը միայն հանուեցաւ։ Կ'երեւի թէ անկման պահուն գլուխը ցիցի մը հանդիպելով այլ եւս չէր կրցած ծովուն երեսն ելնել։ Հէք երիտասարդին դիակը փոխադրուեցաւ Պորտիզակ իր ծննդավայրը։ Հանգուցեալն որքան բարեբարոյ, նոյնքան կ[illegible]տակամէր և զուարթ երիտասարդ մ'էր։»

ԱՐՀԵՍՏՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԿԸ.—Իգտամ օսմ. բնիկ արհեստներու քաջալերութեան արհրաժեշտ հարկին վրայ խօսելով, գոհութեամբ կ'ծանուցանէ թէ ձեռնհաս պաշտօնատան ծրագիր մը մատուցուած է, որ օգտակար տնօրէնութիւններ կ'առաջարկէ բնիկ արհեստներն ու արհեստաւորները քաջալերելու մօսք, բառնալով այն միջոցներ, որք ցարդ արգելք կ'ըլլային արհեստներու զարգացման։ Առաջարկուած տնօրէնութիւններէն մին ա՛ն է որ կայս. կառավարութիւնը Թուրքիոյ մէջ եղած նոր գիւտերը պէտք է իր պաշտպանութեան տակ առնէ, նախապատուութիւն տալով անոնց գործածութեան, իր պէտքերուն համար։ Բնիկ արհեստներու քաջալերութեան պէտքը մեզ համար կենսական խնդիր մ'է, և արհեստից մէջ մեր յետադիմութեան պատճառը նոյն իսկ քաջալերութեան պակասութիւնն է, կը յարէ Թուրք թերթը։

ՎԻՐԱՀԱՏ ճէմիլ փաշա 1900ին ի Բարիզ գումարելի վիրաբուժական համաժողովին նախագահ ընտրուեր է։

ՄԱՀՍՈՒՍԷԻ Վարչութիւնը Լոնտոնի մէջ երկու սրընթաց շոգենաւ գըներ է, մին մեծ և միւսը փոքր։ Ասոնցմէ զատ պիտի գնէ եղեր նաև երկու շոգենաւ, որք կղզիներու գծին պիտի յատկանան։

ԻԶՄԻՏԻ Նաւարանին մէջ նոր կառարած շոգենաւ մը շինուելու վրայ է ի հաշիւ Մահսուսէի։

ԵՄԷՆԻ Նահանգին Շէյխերը ցարդ իրենց ուզածին պէս մարդ կ'ձերբակալէին և իրենց տուներուն մէջ կը բանտարկէին։ Բարենորոգիչ յանձնաժողովն այս զեղծումն ալ վերցուց, խստիւ պատուիրելով Շէյխերուն որ եթէ հարկ ըլլայ մէկը ձերբակալել, պէտք է իսկոյն տեղական իշխանութեանց յանձնեն, կառավարական բանտը դրուելու համար։

ԱՆՏԱՌՆԵՐԸ. — Երկրագործական նախարարութիւնը նորէն հրահանգ ղրկեց գաւառային իշխանութեանց, պատուիրելով որ պետական անտառներու վրայ հսկողութիւն ի գործ դընեն, որպէսզի ծառերը չփճացուին օտարներու ձեռամբ։

ԴՐԱԻՈՒՄ. — Վաճառական Նաւալեան Միսաք էֆ., Սկիւտարի Նախադասա Ատենին միջոցաւ, օրինական արգելքի տակ դնել տուաւ Սամի պէյի Փաշապահճէի քուրուզի մթերանոցներուն հասոյթը, անոր վրայ իր ունեցած պահանջքը գանձելու համար, որ դատական վճռով հաստատուած էր։

ՖԷՐԻԲՈՒԹԵԱՆ աստիճան տրուեցաւ Կայս. Թիկնապահ Ջէրքէզ Մէհմէտ փաշայի։

ՄԱՔՐԻԳԻՒՂԻ մօտ, Գանլը—Տէրէ կոչուած տեղը, խոտի դաշտն երէկ բռնկելով, 20 արտավար տեղ չոր խոտերը փճացան։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ. — Գուլէ—Բաղչէի բնակիչներէն Մարի անուն հրէուհի մը նախընթաց իրիկուն Ղալաթիոյ քարափէն ինքզինքը ծովը նետեց, բայց անմիջական օգնութեանց շնորհիւ ազատուեցաւ։ Զքաւորութիւնն է յուսահատութեան շարժառիթը։

ԿԱՐՄՐԱԽՏ.— Տէտէ Աղաճի մէջ սաստկապէս կ'ճարակի կարմրախտ որ կ'կարծուի թէ ջրերուն աղտոտութենէն ծագում առած է։

ՈԶԽԱՐ.— Մէկ շաբաթուան մէջ մայրաքաղաքս բերուած են 15 հազար ոչխար և գառնուկ։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.—Աղէքսանդրիայէ կ'գրեն թէ Յուլիս 9ի երեկոյին, երբ քանի մը Եւրոպացի ընտանիքներ Աղէքսանդրիոյ շրջակայքը, Մէքս ծառուղիին մէջ կ'շրջագայէին, յարձակում կրեր են 15ի չափ բնիկներէ, որք նախատեր և ծեծեր են զանոնք։ Նոյն պահուն անկէ անցնող Թրամուէի կառքի մը Եւրոպացի ուղեւորք կառքը կեցնել տալով, դուրս ելեր և նախայարձակներուն վրայ վազեր են։ Եւրոպացիներէ մին հօն գտնուող պահակի մը վեցհարուածեանն առնելով, օդին մէջ պարպեր է ոստիկանութեան իմաց տալու համար։ Մօտակայ պահականոցին ոստիկանք պայթման ձայնը լսելով, կռուին վայրը հասեր են, բայց յարձակողք ար գէն կ'ծիկը դըրած էին։ Մին միայն ձերբակալուեր է, բայց ի վերջոյ 11 հոգի եւս ձերբակալուեր են։ 7 Եւրոպացիք, Թրամուէին կառավարն ու պահակը վիրաւորուեր են։

—Էճիբշըն կաղէտ Յլս. 10 Թուով կ'ծանուցանէ թէ Եգիպտական կառավարութիւնը նկատելով որ ուխտագնացութեան եղանակն վերջացած է, և թէ Մաւրիտանացի և Մարոքցի ուխտաւորներ փոխադրող վերջին շոգենաւն, Ապտիւլ-Գատէր Սիւէզի ջրանցքէն անցած է, որոշած է վերցնել քարանդինայի տնօրինութիւններն, որք ցարդ կ'գործադրուէին Ճիտտէէ եկող նաւերուն դէմ։

—Յլս. 9ին Աղէքսանդրիոյ Անաստասի փողոցին մէջ ուրիշ դէպք մը պատահեցաւ։ Երկու բժիշկներ նոյն փողոցն հասած էին ժանտախտէ վարակեալ կին մը քննելու համար, սակայն կնոջ դրացիներն ու բարեկամները բժիշկներուն վրայ խուժելով, թող չտուին որ տունէն ներս մտնեն։ Ցարձակողք նախատեցին և գանակոծեցին բժիշկներն, որք պարտաւորեցան մօտակայ դեղարանն ապաստանիլ։ Ոստիկանութիւնն օգնութեան հասնելով, ամբոխը ցրուեց և բարեկարգութիւնը վերահաստատեց, մինչ վարակեալ կինն իր յօժար կամքով հիւանդանոց կ'երթար։

—Օսման Մահիր փաշա, որ վերջերս մեռաւ, 650 ֆէտտան հող կտակեր է բարեգործական հաստատութեանց։ Գահիրէի Ջուրի ընկերութեան բազմաթիւ բաժնեթուղթեր, 42,000 ոսկի արժողութեամբ, և իր ժառանգութեան մնացեալ մասը Խտիվին մօր վիճակեր են։

ՋՈՆԿՈՒԼՏԱՔԻ Նաւահանգստին շինութեան յանձնառու ճարտարապետ Մ. Օժիէ երէկ Զոնկուլտաք ուղեւորեցաւ շինութիւններն սկսելու համար։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Երէկ հաղորդեցինք կեսարիոյ Առաջնորդին կողմէ Ս. Պատրիարք Հօր մատուցուած Տեղեկագրին իմաստը, ի մասին Ս. Կարապետի վանքին մէջ բացուած Որբանոցին։ Տ. Տրդատ Սրբազան ցոյց տալով թէ 25 որբերու պսպաոքութեան համար տեղէ մը նպաստ յատկացուած չկայ, այս առթիւ վանքին վիճակն Որբոց և կարօտելոց Խնամակալութեան ուշադրութեան կ'ներկայացնէ։ — Կ'լսենք թէ Խնամակալութիւնը պատասխաներ է թէ կեսարացիք համեմատապէս բարեկեցիկ ժողովուրդ մ'են, եւ ինչպէս արդէն 20 որբ որդեգրեր են, մնացեալին համար բան մը կրնան ընել, մինչդեռ Խնամակալութեան դրամին աւելի կարօտ են շատ աւելի աղքատիկ թեմեր։ Հետեւապէս, մնայուն նպաստի կամ 250 ոսկւոյ միանուագ օգնութեան մը առաջարկն անընդունելի դատեր է Խնամակալութիւնը, եւ շատացեր է միանգամ ընդ միշտ 50 ոսկի միայն տալով Ս. Կարապետի Վանքին, ինչպէս երկու տարի առաջ ալ տուած էր 50 ոսկի նոյն 25 որբերուն համար։ Ասով հանդերձ, Առաջնորդն յուսալից է երկու ծայրը մէկ բերելու. և Ս. Կարապետի Որբանոցէն տղայ չպակսեցնելու։

—Քսան և ինն տարի առաջ, Ալէմտաղցի մի ոմն Տ. Ցարութիւն քահանայ գումար մը կ'կտակէ Մայր-Եկեղեցիին՝ ի մէջ այլոց տարեկան 100 ղրուշ տրուելու համար կեսարիոյ Ս. Կարապետի Վանքին։ Մայր-Եկեղեցին դրամը կ'առնու, բայց 29 տարիէ ի վեր փարա մը չի տար Ս. Կարապետին։ Տրդատ Սրբազան այս անգամ ի Կ. Պոլիս այցելութեան առթիւ այս խնդիրը կարգադրել կ'ուզէ, բայց Թաղ. Խորհուրդը, Մայր-Եկեղեցիին կարօտ վիճակն յայտնելով, կ'խնդրէ որ Ս. Կարապետի Վանահայրը շատանայ ի փոխարէն 2,900 ղրուշի, միայն 700 ղրուշով, եւ մնացեալ 2,200 ղ.ը նուիրէ Մայր-Եկեղեցիին։ Տ. Տրդատ Եպս. կ'ընդունի, եւ Թաղ. Խորհուրդը կ'փութայ շնորհակալութեան գիր մը ղրկել Ն. Գերապատուութեան։ Կեսարիոյ Ս. Կարապետը, որ Պատրիարքարանի մէջ Որբոց եւ կարօտելոց Խնամակալութեան իր ափը կ'կարկառէր նպաստ խնդրելով, նոյն օրը դիմացի շէնքին մէջ 2,[illegible]00 ղրշ.ի նուէր մը կ'ընէ Մայր-Եկեղեցիին։ Այսուհետեւ Մայր-Եկեղեցւոյն Թաղ. Խորհուրդն՝ հին կտակներուն համար ըլլալիք կարգադրութեանց համեմատ՝ զեղչելով սակով մը պիտի գործադրէ Ալէմտաղցի քահանային կտակը, եւ ամէն տարի բան մը պիտի տայ Ս. Կարապետին։

— Ազգային Վարչութիւնը դեռ չյաջողեցաւ Ելեւմտից Հոգաբարձութիւնը կազմել, իբրեւ Օրինական հակշիռ կամ հսկողութեան մարմինը Պատրիարքարանի ելմտական գործերուն վրայ։ Երէկ եւս միայն Մարտիրոս էֆ. Էքսէրճեան ներկայացաւ, իսկ Ղազարոս Միքայէլեան և Ցակոբ Փորեան էֆ.ք վերջնապէս հրաժարած ըլլալով, Ս. Պատրիարք Հայրն Էքսէրճեան էֆ.ին յանձնարարեց երկու ընտրելիներ գտնել և առաջարկել Ազգ. Վարչութեան ի հաստատութիւն։

—Կ'լսենք թէ կէտիկ փաշայի վարժարանին փակման նկատմամբ ոստիկանութիւնն իր քննութիւնն աւարտած է, եւ Թաղ. Խորհրդոյ կողմէ հաղորդուած բացատրութիւնը թէ տարեկան արձակուրդի առթիւ փակուած էր, գոհացուցիչ դատուելով, խնդիրն ելք ունեցած չէ։ Իսկ տեսուչի, վարժապետի եւ վարժուհիի «մէջէ մէջ» խնդիրներուն եւ գայթակղութիւններուն գալով, Թաղ. Խորհուրդն որոշած է ամէնքը մէկէն պաշտօնանկ ընել, եւ Օգոստ. 1 են կրկին դպրոցները բանալ ուսուցչական բոլորովին նոր մարմինով մը։ Եւ իրօք այս էր միակ բանաւոր միջոցը՝ գայթակղութիւնը բառնալու Թաղին մէջէն։ Այժմ միայն Թաղին ժամկոչն ու տնտեսը քննութեան ներքեւ են՝ անձնական գործի համար։

—Որբոց եւ կարօտելոց Խնամակալութիւնը, իրեն եղած առաջարկութեան համեմատ, կ'խորհի մէկ—երկու որբանոց-դպրոց եւս բանալ նոյն մարդասէր եւ կրօնասէր սեղանաւորին՝ Պ. Ժամհարեանի նպաստով։

—Վանայ մէջ, Տ. Ներսէս Սրբազան և Տ. Վահրիճ Վրդ. հիմա կ'աշխատին քաղաքամէջի եօթն եկեղեցիներն և Թաղական խորհուրդներն եւ Հայկավանքի Թաղական խորհուրդն ու եկեղեցին միացնել՝ կանոնաւոր դըպրոց մ'ունենալու համար քաղաքին մէջ։

—Ազգ. Պատրիարքարանէն Վան ղրկուած բոլոր նպաստի գումարները գործածուեր են ցորեն գնելու եւ ժողովրդին բաշխելու։ Բայց կարօտութիւնք այնքան շատ էին որ իւրաքանչիւր նպաստընկալի փոքր բան մը միայն բաժին ինկեր է։ Բաղէշցաները կարելի եղածին չափ ցորեն կ'գնեն բաշխելու կարօտեալներուն՝ երբ Առաջնորդարանը դադրեցնէ իր բաշխումներ։ Ինչպէս կ'երեւի, ծակ կարասը լենալիք չունի։ Աստուած տար, նոր հունձքն առատ ըլլար։ Բայց այն ալ խնդիր է թէ ժողովրդէն ո՛րքան մաս մը բան ցանած է որ քաղէ։

—Ազգ. Պատրիարքարանի Օրէնքին վերաքննութեան ծրագիրն ամբողջացած ըլլալով, պէտք եղած Թուով օրինակուած է, եւ Խառն Ժողովոյ բոլոր անդամներուն ղրկուած է, որպէս զի իւրաքանչիւր եկեղեցական և աշխարհական անդամ իր դիտողութիւնները պատրաստէ՝ յառաջ Խառն Ժողովոյ յօդուած առ յօդուած ընթերցման առթիւ խորհրդակցութեան առարկայ ըլլալու համար, ըստ սովորութեան։

—Ամասիոյ Գաւառ. Վարչութեան կողմէ տեղեկագրուած է յԱզգ. Պատրիարքարան թէ Մարզուանու Զարխափան Վանքին մէջ Որբանոց մը բացուած է եւ առ այժմ 12 որբ ընդունուած է, յատուկ Խնամակալութեան մը հսկողութեան ներքեւ, զոր վիճակին առաջն. տեղապահն ալ հաստատած է։

—Տ. Ներսէս Սրբազան նորագման կարօտ եկեղեցիներուն մէկ ցուցակը ղրկեր է Ս. Պատրիարք Հօր, խնդրելով որ աշխատութեանց կատարման պէտք եղած արտօնութիւնը ձեռք բերուի ըստ սովորութեան։

—Զարանճագի տեղապահ Տ. Մակար Վրդ. մանրամասն տեղեկագիր մը ղրկեր է, որով նպաստի կարօտ աղքատներուն թիւն հազար երկու հարիւր հոգիի մօտ կ'հշուէ՝ արու և էգ. և ըստ այնմ նպաստ կ'խնդրէ։

—Մշոյ գաւառակաց ոմանց կարօտեալներուն երբեմն բաշխուած հացագինի ընկալագրերուն ներքեւ դրոշմ փակցուած չըլլալով, Հանրային Պարտուց Վարչութիւնը պահանջած էր տուգանք առնել անոնցմէ որոց ձեռքը կ'գտնուէին յիշեալ ընկալագիրք։ Պատրիարքարանի կողմէ գրուած է նոյն Վարչութեան թէ Բարեգործական հաստատութիւնք զերծ են իրենց ընդունած նպաստներուն փոխարէն տրուած ընկալագրերուն դրոշմ փակցնելէ, եւ յիշեալ հացագնի բաշխումն իսկ բարեգործական ձեռնարկ մ'ըլլալով որ կ'կատարուէր Պատրիարքարանի հսկողութեան ներքեւ, մինչեւ նոյն սկզբունքով հարկ չէ դատուած դրոշմ փակցնել։ Այս մասին պէտք եղածը գրուած է նաև Դատական Նախարարութեան, կարեւորն հաղորդուելու համար առ որ անկ է։

—Վահրիճ Վրդ. գոհութեամբ կը տեղեկագրէ թէ Ներսէս Սրբազան մի միայն պետական պաշտօնէից հետ այցելութիւններ փոխանակած է, եւ տեղւոյն հիւպատոսական մարմնէն և ո՛չ մէկուն այցելութեան գացած է։

—Նիկոմիդիոյ Ստեփաննոս Եպիսկոպոսը Վարագայ Վանքին Ստեփաննոս վարդապետին ղրկեր է 17 ոսկի նպաստ նոյն վանքին Որբանոցին համար։ Կարելի չէ, հետեւաբար, ըսել թէ Նիկոմիդիոյ Վիճակը բան մը չըներ որբերուն համար, մանաւանդ որ Ռոտոսթօ եւ Ազգ. Պոլիս այդ գումարին քանի մը պատիկը կ'ծախսեն հանապազ, և պարտաւորիչ կերպով, իրենց սեփհական որբերուն համար։

—Կեսարիոյ Առաջնորդն այսօր ժամ 7ին կ'մեկնի Մէսաժըրիի շոգենաւով։ Երկու շաբաթ միայն պիտի մնայ իր մօր և եղբօր քով, յետոյ Գօնեա պիտի երթայ, ուր կուսակալին պիտի ներկայանայ թեմական գործերով. ապա կեսարիա պիտի ուղեւորի՝ այցելով իր զանազան թեմերը։

—Սղերդի առաջնորդական տեղապահն հազար ու մէկ պատճառներ կը թուէ՝ պաշտօնէն հրաժարելու համար։ Տեղացիք իր լեզուն չեն հասկնար. փոխադարձաբար, ինքն ալ անոնց լեզուն չի հասկնար։ Օրինական ժողովներ ու Խորհուրդներ կազմելու համար շնորհքով մարդու սով կայ։ Սով կայ նաեւ՝ կրնայ ըսուիլ՝ իր հօտին մէկ մասին նիւթական կարօտութեան ակնարկելով։ Աս չկայ. ան չկայ։ Փառէն Վարդապետին վրայ ալ արդէն այնքան տակուն սիրտ չկայ որ դժուար կացութեան մը կարենայ դիմակալել։ Հետեւաբար, ինչպէս Բիւզանդիոն առաջին օրէն կ'գուշակէր, կ'վախցուի թէ այս Արմաշցին այն արտակեդրոն վիճակին օգտակար պիտի չկրնայ ըլլալ։ Մ'ոք նորէն կ'պնդենք թէ այս հարաւային արտախօս և քրդախօս թեմերուն համար նոյն հարաւային գծի գաւառակներէն քարոզիչ և առաջնորդներ պէտք է ճարել, և եթէ բնաւ չկան, առնուխեն պատրաստել ո՛ և է յարմար Վանքի մը կամ դպրոցի մը մէջ։ Արտաշարժ է՝ կ'ըսեն՝ Փառէն Վրդ.ին առ Ս. Պատրիարք Հայրն ուղղած գիրը, որով կ'ըսէ թէ իր թեմականներուն և մինչեւ իսկ Սղերդի երեւելիներուն հետ խօսակցելու համար թարգմանի կ'կարօտի։ Ո՞ւր մնաց ուրեմն Միացեալին համբաւաւոր ընթացաւարտները։ Բայց խեղճերը քանի՞ հոգի էին արդէն, և է՛ն շնորհքաւորները մէյ մէկ պաշտօնով ազդին կ'գտնուին թերեւս։

ՍԱՀԱԿ—ՄԵՍՐՈՊԵԱՆ
ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Ս. Պատրիարք Հայրն այսօր Ղալաթիոյ եկեղեցւոյն մէջ ի ներկայութեան խուռն բազմութեան պերճախօս քարոզ մը տուաւ Սրբոցն Սահակայ եւ Մեսրոպայ կատարած գրական մեծ գործին վրայ։ Ցետոյ, Սահակ—Մեսրոպեան Մրցանակաբաշխութեան 13րդ տարեկան հանդէսը տեղի ունեցաւ նախագահութեամբ Ս. Պատրիարքին։ Ներկայ էին՝ Կրօն. Ժողովոյ երկու անդամները, Պատրիարքական փոխանորդ Սրբազանը, Տ. Հմայեակ Սրբազան, Տ. Գէորգ Սրբազան, Կեսարիոյ և Ռոտոսդոյի Առաջնորդները, նաև անդամք Կրօն. և Քաղաք. Ժողովոց, Ուսումնական Խորհրդոյ, գրագէտներ, խմբագիրներ, են։

Տ. Մկրտիչ Հայրը կարդաց Տեղեկագիրն, յորմէ իմացանք որ այս տարի վեց աշխատութիւնք ներկայացուեր են, որք են.

1.—«Աղուանից երկիր և դրացիք և Արցախ», Տ. Մակար Եպս. Բարխուդարեանցի, երկհատոր, Ա. հատորն Աղուանից երկրին վրայ, 302 էջ, և Բ. հատորն Արցախոյ վրայ, 461 էջ։ Գեր. հեղինակն եօթն ամիս ճամբորդած է Աղուանից երկրին եւ Տաղստանի ամէնէն վտանգաւոր ձորերը, սարերը, և քննած և ի վեր հանած է ազգային—եկեղեցական ամէն յիշատակները, կրօնական հնութիւնները, վանքերու և եկեղեցիներու աւերակները, խաչքարերն, անոնց արձանագրութիւնն, են.։ Քննած է այս երկիրներն, և մանաւանդ Արցախը, ցեղային, լեզուաբանական և այլ տեսակէտներով, հին և նոր ցեղերուն բնավայրերը, աւանդութիւնները, են։ Տպեալ ի Տփղիս և ի Բագու։

2. «Համեմատական հետազօտութիւն մեր յորոլէզներուն, Բաբելացւոց աւանդութիւններուն եւ Վ[illegible]նայ արձանագրութիւններուն վրայ, և պսակ մը Ֆրիտրիխ Միւլլէրի գերեզմանին վրայ», երկու փոքրիկ տետրակներ Պ. Պասմաճեանի, արտատպուած «Բազմավէպ»էն։

3. «Հայերէն ուսումնասիրութիւններ», ձեռագիր գործ Պ. Գր. Վանցեանի, 170 էջ, բանախօսութիւնք արտասանեալ Բէդկրսպուրկի, Պերլինի եւ Հայտըլպէրկի մէջ. քննելով լեզուաբանութեան օրէնքներ, կանոններ Հայ լեզուի հանգամանքներ, են։

4. «Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս», երկհատոր գործ Հ. Ցակոբոս Վ. Քօսեանի, Ա.ն 369, Բ.ն 161 էջ։ Հրատարակեալ ի Վիեննա 1898ին։ Իզմիրի Հայ գաղթականութեան պատմութիւնը, տեղւոյն Հայոց հնութիւնները, կարեւոր անձնաւորութիւններն և բարերարութիւնները, Ազգ. հաստատութիւնքը, տեղւոյն Հայ—հռոմէական հին գաղթականութեան օտարանալուն պատճառները։ Պատկերազարդ։

5. «Հին օրեր և այն օրերուն մարդը, կենսագրութիւն Տէրոյենց Պատուելիի»։ Ձեռագիր գործ Ց. Մրմրեան էֆ.ի, 222 էջ։ Տէրոյենցի կեանքը, հրատարակութիւնները, գրքերը, իր ժամանակին ազգային և եկեղեցական պատմութիւնը։

6. «Նախափորձ համառօտ պատմութեան կրթական զարգացման Հայոց, հին ժամանակներէն մինչեւ 1875», ձեռագիր Տքթ. Ն. Տաղաւարեանի։

* * Յանձնաժողովը կ'յայտարարէ թէ այս տարի եւս առաջնակարգ գործ մը չկայ ներկայացուած որուն տալ արժէր 65 ոսկիի ամբողջ մրցանակը։ Ուրեմն, մրցանակին երեք կտորի բաժնել պէտք եղած է։

Այս երեք գործերն են։

Ա. Աղուանից Երկիր և Արցախ, 30 ոսկի։ —Այս գործին քննութիւնը յանձնուած էր յԵրուսաղէմ Սահակ Եպս. Խապայեանի, որ ինքն եւս շրջած ըլլալով նոյն երկիրները, և մօտէն ճանչնալով նիւթին դժուարութիւնը, կ'գովէ Մակար Եպիսկ.ին մանրակրկիտ աշխատութիւնը, երեւան բերած յիշատակներուն շահեկանութիւնը, և թէպէտ ուսումնասիրութիւնն այնքան խորունկ և բազմակողմանի չէ, բայց տակաւին իբրեւ հում նիւթ ազգագրութեան, արժանի է քաջալերութեան։

Բ.— «Հայք ի Զմիւռնիա». 20 ոսկի։ Քննութիւնն յանձնուած էր Մամուրեան էֆ.ին, որ հրաժարեցաւ, թէ՛ տկարութեան և թէ՛ իր Իզմիրցի ըլլալուն պատճառաւ։ Ցետոյ քննեց Ց. Թուրգէն էֆ., որ գնահատելի գտաւ զայն, իբրեւ խղճի մտօք կատարուած աշխատութիւն, թէև ոչինչ ունի բանասիրական կամ հնախօսական։

Գ.— «Տէրոյենց Պատուելի». 15 ոսկի։ Քննութիւնն յանձնուեցաւ Վահ. Ստեփան փաշային, որ հրաժարեցաւ, յետոյ Տ. Խորէն Սրբ. Աշըգեանին, որ ինչ ինչ պատմական պարագաներ քննադատելով հանդերձ, գնահատելի գտաւ զայն, որովհետեւ կ'համակրի Տէրոյենց Պատուելիին իբրեւ կրօնասէր գրագէտ, բանիբուն աստուածաբան, անխոնջ ժամենագիր և թարգմանիչ, որուն տպեալ և անտիպ գործերը 145 հատոր են։

Իսկ մերժուածներն են.

1. Տքթ. Տաղաւարեանի ձեռագիրը, զոր մանրամասնօրէն քննադատած է Պէրպէրեան էֆ., ցոյց տալով թէ բուն իսկ Հայոց կրթական զարգացման ուսումնասիրութիւնը չէ այն, այլ այն զարգացման վերաբերեալ կարգ մը արտաքին իրողութիւններու ցուցակագրութիւնն, ասդիէն անդիէն քաղուած,—վանքերու, դպրոցներու, տպարաններու թուումն մասանց, անուանց ցուցակ մը, են։

2. Պ. Գր. Վանցեանի ուսումնասիրութիւնը, զոր քննադատած է Հ. Մէնէվիշեան Վրդ։

3. Պ. Պասմաճեանի գործը, զոր Յանձնաժողովն արդէն հարկ չէր դատած քննիչի յանձնել, աւելի լրագրական մանր յօդուածներ նկատելով, քան մատենագրական գործ։

Ցաւարտ Տեղեկագրին, Տիգրան էֆ. Եուսուֆեան իր անխուսափելի ճառն արտասանեց, ի գնահատութիւն Յանձնաժողովին, յետոյ խօսեցաւ Ս. Պատրիարք Հայրը, և ներկայ եկեղեցական Հարք օրհնեցին յիշատակն այն պատուական Հայուն, Ղլըճեցի Պ. Ցովսէփ Իզմիրեանցի։

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐ

ԼԱ ՀԷ, Յուլիս 19.—Իրաւարարութեան յանձնաժողովը, լսելէ յետոյ Ֆրանսացի պատուիրակներէն տը'Էսթուռնէլ, որուն յանձնուած էր ի մի հաւաքել զանազան պետութեանց կողմէ եղած առարկութիւններն իրաւարարութեան ծրագրին դէմ, ընդունեց իրաւարարութեան վերաբերեալ պայմանագրութիւնը։ Քննիչ յանձնաժողովներու վերաբերեալ ծրագրին մասին դէմ փոքր պետութիւնք առարկութիւններ ըրին վախնալով որ մեծ պետութիւնք պիտի բռնադատեն զիրենք ընդունիլ միջազգային քննութիւն մը այնպիսի վէճերու առթեն, որոց մէջ իրենք ալ կրնան մասնակցութիւն ունենալ։ Ցունաստանի, Ռումանիոյ և Սերպիոյ ներկայացուցիչք մանաւանդ ծրագրին այս մասին հակառակ քուէ տուին։

ՊԵՐԼԻՆ.— Բժիշկներն յայտարարեցին թէ իսկար հանգիստ մը անհրաժեշտ է Գերման կայսրուհւոյն՝ իր ոտքին ճմլուածը բուժելու համար։

ԼՈՆՏՈՆ.— Տիկին Սալզպըրի բոլորովին ապաքինեցաւ իր անդամալուծական վերջին տագնապէն։ (Անցեալ օր սխալմամբ Լորտ Սալզպըրիի վերագրուած էր նոյն հիւանդութիւն։ Ծ. ԽՄԲ.)

ՊԱՐՍԵԼՈՆԱ.— Փառաւոր ընդունելութիւն եղաւ ֆրանսական նաւաբաժնին։

ՄԱՏՐԻՏ.—Սպանիոյ թագուհին ու թագաւորն այս առաւօտ Ս. Սեբաստիէն գացին։

ՎԻԵՆՆԱ.—Աւստրիոյ և Հունգարիոյ նախարարապետները, կոմս Թուն և Սէլ, քանի մը օրէն Իշլ պիտի երթան Ֆրանց Ճոզէֆ կայսեր ստորագրել տալու Աւստրիոյ և Հունգարիոյ Խորհրդարաններէն ընդունուած պետական պայմանագիրը։

ՓԱՐԻԶ.— Գրէթէ վերջացած կը նկատուի Անգլիոյ և Թրանսվալի վէճը։ Հանքային հրապարակը զգալի բարձրացում մը կրեց։

ՀԱՅՈՒՀԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ
ԱՏԱԲԱԶԱՐ

Յառաջիկայ տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 7 ին (Ն. Տ.) Եշ. առաւօտ։ Վարժարանն ստիճա'ն մ'ալ կատարելագործելու համար հարկ տեսնուած է գիշերօթիկներու տարեթոշակը 10 Օսմ. ոսկիէն բարձրացնել 12ի, զոր պէտք է հատուցանել երկու մասնավճարով. 6 ոսկի Սեպտ.ի սկիզբն և 6 ոսկի Փետր.ի սկիզբը։ Դաշնակի համար 3 և երգեհոնի համար 1½ ոսկիի յաւելուածական գումար մը կ'պահանջուի։ Աւելի տեղեկութեանց համար դիմել առ Տնօրինութիւն Հայուհեաց վարժարանի, Ատաբազար։ 10—3

ՐՈՊԷՐԴ ՔՈԼԷՃ

Սոյն Քոլէճ, հաստատեալ կայս. Բարձր Իրատէով, կազմակերպեալ է Եւրոպեան ու Ամերիկեան նոյն օրինակ հաստատութեանց նման, ունենալով նշանաւոր դասատուաց կաճառ մը որով կ'կառավարուի. Նաև ընտիր և յաջողակ ուսուցիչներ՝ Հայերէն, Պուլկարերէն, Գաղիերէն, Գերմաներէն, Յունարէն և Թրքերէն լեզուաց համար։ Ունի գրատուն մը, իբր 8000 հատորներէ բաղկացեալ, երկրաբանական, հանքաբանական, կենդանաբանական և բուսաբանական հաւաքածոներ, և բնագիտական, տարրաբանական, բնախօսական և այլ բազմաթիւ գործիներ։

Քոլէճին նպատակն է ժամանակիս պահանջմանց համաձայն բարձրագոյն կարգի կրթութիւն մը տալ իրեն դիմող երիտասարդաց. Նոր տնօրինութիւնք եղած են բնական գիտութեան դիւրութիւններ ընծայելու համար։

Ռոպէրդ Քոլէճի մէջ աւանդեալ գրական և գիտական ուսմանց լեզուն Անգլիերէն է. սակայն իւրաքանչիւր ուսանող պարտաւորեալ է ուսանիլ իր մայրենի լեզուն և տոհմային պատմութիւնը։ Հայերէն լեզուի և Դպրութեան համար գծուած է ուսման կատարեալ ընթացք մը որուն պիտի հետեւի իւրաքանչիւր հայ ուսանող։

Հաստատութեան հոյակապ և քարաշէն շէնքերը կառուցուած են ի Րումէլի Հիսար, Վոսփորի Եւրոպական կողմը գտնուող բերդերուն ետեւը բլրի մը վրայ, որուն դիրքը Վոսփորի ափանց վրայ գեղեցկագոյնն և ամէնէն առողջարարը համարուած է։

Քոլէճին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտեմբեր 15ին։ Մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել առ Տեսչութիւնն, ի Րումէլի Հիսար։ 24—1

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ
ՑԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Քոնս. Սէրի Դ.	Օ.Ո.	25 12
Ամէնէն բարձր գին	»	25 13
Ամէնէն վար գին	»	25 10
Րումէլիի Երկաթուղի	Ֆր.	127 50
Ամէնէն բարձր գին	»	127 7/8
Ամէնէն վար գին	»	126 3/4

ԲԱՑՈՒՄ 8 Յուլիս.

Օսմ. Քոնս. Սէրի Դ. Օ. Ո.		25 12½
Րումէլիի Երկաթուղի	Ֆր.	127 5/8
Քրէտի Ժէնէրալ ՕԹՄ.	Օ. Ո.	2 30
Երկրագործական Պանքա	»	8 18
Սօս. Օթ. Շանժ է Վալ.	Ա. Ո.	2 36
Օսմ. Ապահովագր. Ընկ.	Օ. Ո	4 06
Թրամուէյ բաժնեթ.	ղրշ.	632 —
» Թիւխանէ	»	230 —
» պարտաթ.	»	510 —
Տէրքոսի ջուրի Ընկ.	Ֆր.	309 —
Քարափ Կ. Պոլսոյ	»	482 —

ՍԹԻԼԱՆՑ

Քոնսոլիտէ մէկ օրուան	Ա. Ո.	— 55
» ուշ օրուան	»	1 65
Րումէլի Երկթ. »	»	2 —

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

20 ֆրանքնոց	ղրշ.	87 15
Անգլիական ոսկի	»	110 02
Բօլ Էմբէրիալ	»	90 25
Մէճիտիէ արծաթ	»	1[illegible]8 01
Քրիմեց	»	51 04
Մէթալիք	»	0 20
Րուպլ Թղթադրամ	»	8 58

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լոնտոն 3 ամիս	ղրշ.	109 10
Բարիզ 3 »	Ֆր.	23 06¼
Ֆրորին մանրա	»	10 95

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆ

ԼՈՆՏՈՆ, 19 Յուլիս

Օսմ. Քոնս. Սէրի Բ.	Ա. Ո.	46 —
» » » Դ	»	26 50
» » » Դ. բաց.	»	22 75
» » » Դ. գոց.	»	22 81
Փոխառութիւն Գաստագա	»	84 —
» Օսմ. 3½ %	»	99 25
Օսմ. Կայս. Պանքա	»	12 12
Այտընի երկաթուղի	»	11 —
Եգիպտական միացեալ	»	105 50
Անգլ. Քոնսոլիտէ	»	107 12
Հելլենական 5 %	»	42 50
Մոնոպոլ Հելլենական 4 %	»	50 —
Ռանթ » 4 %	»	35 08
Պուլկ. Փոխառ. 6 % 1888	»	94 —
» նոր » 6 % 1892	»	90 87
Փոխան. Բարիզի վրայ	»	25 47½
Դրամաշեղչ	»	3 50

ՊԵՐԼԻՆ, 19 Յուլիս

Օսմ. փոխառութիւն 1888 մարք		99 40
Րումէլիի Երկաթուղի	»	128 40
Անատ. Երկ. պարտաթուղթ	»	100 10
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20 28

ՓԱՐԻԶ, 19 Յուլիս

Օսմ. Քոնս. Սէրի Դ. բաց.	ղրշ.	23 02
Օսմ. Քոնս. Սէրի Դ. գոց.	»	23 05
» » Բ.	»	47 —
» » Գ.	»	26 55
Օսմանիյէ	»	419 37
Րումէլիի Երկաթուղի	Ֆր.	127 50
Օսմ. Կայս. Պանքա	»	554 —
Ֆրանս. Ռանթ 3 %	»	101 —
Քրէտի Լիոնէ	»	958 —
Պանք տը Բառի	»	1060 —
Իտալական Ռանթ	»	90 05
Սպանիական արտաքին	Ա. Ո.	59 90
Չէք Լոնտոնի վրայ	»	25 24½
Դրամաշեղչ	»	3 —

ՎԻԵՆՆԱ, 19 Յուլիս

Փոխան. Բարիզի վրայ	Ֆիօր.	47 85
» Լոնտոնի վրայ	»	120 80
Րումէլիի Երկաթուղի	»	63 50
Օսմ. Թէժի	»	144 20

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՖԻՆԻՔՍ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 1,000,000 — ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ ՅԱՄԻՆ 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ աւելի քան մի դար առաջ, սոսկ հրդեհի ապահովագրութիւն մ'է՝ որոյ բաժնետերք Անգլիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։ Դրամագլուխն եւ պահեստի գումարը կը հասնին 4,000,000 անգլ. ոսկիի։

ՖԻՆԻՔՍ Ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մէկ գլխաւոր ապացոյցն է 20,000,000 անգլ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասներուն համար։

ESTABLISHED 1782

ՖԻՆԻՔՍ Ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի եւ կայծական՝ կալուածք, կարասիք եւ ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք եւ միջնորդութեամբ ստորագրելոցս, որ ունիմք լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասները։

Հ. ՍՈՒԱՆ և Ընկ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ եւ Սեւ Ծովու եզերաց, Ղալաթիա, Պանք Օթոմանի վարի քովը Վիթալիս խան, գետնայարկ Թիւ 1։

ԱԶԴ. — Պատիւ ունիմ ծանուցանել՝ թէ բազում տարիներէ ի վեր ջանք ու աշխատութիւնք նուիրած եմ ապահովագրական ընդհանուր ընկերութեանց, և վերջերս գործատեղիս փոխադրած եմ, Կ. Պոլիս Պահճէ-գաբու Աստարճեան Թղթատան վերի յարկ սենեակներն [որոց մուտքն է կից աղբիւրի քովի դռնէն]։

Կեանքի ապահովագրութեան փափաքողք մանրամասն տեղեկութիւն ստանալով, աւելի օգտակար ծանօթութիւններ պիտի գտնեն և պիտի համոզուին՝ թէ լուսաւոր գաղափարով ապրիլը ո՛րքան բարի ապագայ կ'բերէ։ Իսկ տգէտ մտօք ապրելով ո՛րքան դժբախտ կ'ըլլան, մանաւանդ երբ զաւակաց տէր մարդ մը անկարեւոր համարէ աշխարհի նորահնար ամենաօգտակար միջոցները։ Իբրեւ մարդասիրական պարտականութիւն, կ'հրաւիրեմ ազնիւ հասարակութիւնն յապահովագրութիւն կենաց՝ մանրամասն տեղեկութիւններն ալ ձրի հաղորդելով։ Ամէն զոհողութիւնք ի գործ պիտի դնեմ գոհացնելու կեանքի ապահովագրութեան փափաքողներն։

Բաց ի Ուրբաթ օրերէ ամէն օր [Ը. Թ.] առաւօտէ մինչեւ ժամը 6 պատրաստ եմ ընդունիլ ազնիւ փափաքող անձինք։

Գործակատար
Հրդեհի և կենաց ապահովագրական ընկերութեանց
50—27 ՄԻՀՐԱՆ ՕՀԱՆԵԱՆ

ՀԱՄՊՈՒՐԿ եւ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	ֆրանք	27,000,000
Պահեստի դրամ	»	52,002,500
Տարեկան հասոյթ	»	70 339,912

Ընկերութիւնս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրէ մթերանոցներ և բնակարաններ, ... մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ, խիստ չափաւոր տոկոսներով։

Լիազօր Ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Գալաթա Պահչէ-Գաբու, Անանիադիս խան, 20, 21, 22

ԷՔԻԹԱՊԼ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՑ

[illegible]

ՆՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 339 ՄԻԼԻՈՆ ՖՐՔ.

Աշխարհիս վրայ գտնուող ամբողջ կենաց ապահովագր. ընկերութեանց մէջ ԷՔԻԹԱՊԼ ամենէն աւելի յաւելուածական ... ունի.
ԷՔԻԹԱՊԼ ամենէն շատ ... հասոյթը ունի.
ԷՔԻԹԱՊԼի տարեկան նոր գործառնութիւնք էն մեծ գումարը կ'ներկայացնեն.

[Այս ընկերութիւն, ինքն իր գլխուն, Ֆրանսայի ամբողջ ընկերութեանց գրեթէ ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ գործ կ'ընէ։

Գործակատար ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ
Կ. Պոլիս, Պահճէ-Գաբու, Անանիադի խան Թիւ 20, 21 և 22
Ընկերութեան դրամատունն՝
Լոնտոն, ԱՆԳԼԻԱՅԻ ՊԱՆՔԱ
Բարիզ, ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ՆՈՐ ԳԻՐՔ

ՖՕՍՖՕ ԼԱՔԹԻՆ ՔԻՐՆ

PHOSPHO-LACTIN KIRN

Ֆոսֆօլաքթինը փոշի մ'է որ դիւրաւ կ'հալի ջուրի, կաթի եւ գինիի մէջ, եւ զոր հնարած է Ֆրանսացի մեծահռչակ բժիշկ Տքթ. Քիրն, անդամ Ֆրանսական Ակադեմիին և Ասպետ Պատուոյ Լէգէոնի։

Ֆոսֆօլաքթինը
Անուշահամ դեղ մ'է զոր տղաք մեծ ախորժով կ'առնեն իբր շաքարեղէն։

Ֆոսֆօլաքթինը
Կ'բուժէ անարիւնութիւնը։

Ֆոսֆօլաքթինը
Ախորժակ կ'բանայ եւ դժուարամարսութիւնը կ'բուժէ։

Ֆոսֆօլաքթինը
Օգտակար է տղայոց, ծերերու եւ երիտասարդներու։

Ֆոսֆօլաքթինը
Ամէն եղանակի մէջ և գլխաւորաբար ամռան տաք եղանակին կ'խմուի, երբ անկարելի է Մօրիւ ձկան իւղ գործածել։

Ֆոսֆօլաքթինը
Մօրիւ ձկան իւղին օգտակար ազդեցութիւններն ունի և անոր անպատեհութիւններէն զերծ է։ Կ'բուժէ խոյլը [սրաձա], սրտի բաբախումը, ծիւրումը, հիւծախտը, ջղային հիւանդութիւններն, ոսկորի ..., ճողածութիւնն և ... անուանոր տկարու...

PH... [LA]CTIN [K]IRN

Կ'վաճառի ... և Կ. Պոլսոյ ... բժիշկները. կ'ծախուի ... մեծ դեղարաններուն մէջ։

Կեդրոնատեղին Ղալաթիա, Ասա խան, Թիւ 14, 15 Geo. C. Rowell et Cº ընկերաց վաճառատունը։ 26—10

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ ՆՈՒԷՐ

Ընթերցողներէն ով որ ի սառ... ըև նշանակուած տեղուանքը 70 փարա մանրուք ղրկէ (որ միայն ճամբու ծախքին գինն է) պիտի ստանայ չքեղ տուփ մը տանթոլի նմոյշ, որուն մէջ զետեղուած են, որուն մէջ մէկ տուփ ՏԱՆԹՕԼԻ ջուր և մէկ տուփ ՏԱՆԹՕԼԻ փոշի և խմոր, նաև ակռայի վրձին մը։ Տանթօլի ջուրը ... բաւթէօնեան գըրութեամբ պատրաստուած հականեխիչ և անուշահոտ նիւթ մ'է, որ բերնին ու լինտերու մէջ գտնուած վնասակար միկրոպները ջնջելով, բերնի և ակռայի յատուկ ամէն կարգի հիւանդութիւններ, գարշահոտութիւնը, ակռաներու փտումը, թարախացումը և կոկորդի բորբոքումն անմիջապէս բուժելէ զատ ակռաներու աղտերն ու գեղնութիւններն ալ մաքրելով քանի մը օրուան մէջ ճեփ ճերմակ կ'դարձնէ զանոնք և բերնին անուշ զովութիւն մը կ'պարգևէ։ Ամենասաստիկ ակռայի ցաւերը վերջնականապէս բուժելու համար կտոր մը բամպակի վըրայ ութ-տասը կաթիլ ՏԱՆԹՕԼԻ ջուր կ'թաթխելով ցաւած տեղը դընել բաւական է։ Կ'ծախուի Պոլսոյ Էսկի Զաղթիյէ ... Շալճեանի ... տոհմագործական վաճառատունը, Զագմագճըլար պողոտային ... կից Ֆերահէնեանի բուլի վաճառատունը, Պահճէ-Գաբու Պին պիր ... վաճառատունն ու ... խանի կամուրջին գլխի ու Բերայի Շիտակ ճամբուն վրայի դեղարանները. Բայց ի նմոյշներէն ՏԱՆԹՕԼԻ ստորական տուփերն ու սրուակներն ևս կ'ծախուին սոյն վաճառատուններն։ 13—3

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՀԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿ.Ն ԿԵՆԱՑ ՎՐԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ԵՒՐՈՊԱ

Բարիզ 1 և 3 Լը Բէլթիէ փողոց (Պուլվառ տէ Իթալիէնի անկիւնը)։ Զուտ փոխադարձ Ընկ.
Ա...ղջ շահերը կ'պատկանին ապահովագրեալներուն։

1899 Յունուար 1ին ամբողջովին իրականացած երաշխաւորութեան պատրաստ գումարն է ՄԷԿ ՄԻԼԻԱՐ 119 ՄԻԼԻՈՆ ֆրանք։ Ապահովագրութիւն որ կ'առնէ՝ 4,892,000 000 ֆր.։ Ընկերութեան հիմնուելէն ի վեր՝ 1845՝ ապահովագրեալներու վճարուած՝ մէկ միլիառ 432 միլիոն։

1899ին հնչուն դրամով վճարելի շահերն են աւելի քան 15 միլիոն ֆր. 1898ի բաշխուածէն աւելցած։

ԼԱ ՆԻՒ ԵՈՐՔ ունի 300,000 է աւելի անդամ, որք Ընկերութեան ..., որոց կ'պատկանին Ընկերութեան բոլոր շահերը։ Եթէ մասնակից էք, եւ կամ տակաւին չէք, խիստ շահեկան է ձեզ համար ճանչնալ Ընկերութեան մասնաւոր կարգադրութիւնները։ ... մանրամասն տեղեկութիւններ ... գործ ապահովագրութեան վրայ ... երաշխաւորութեան ... Նոյնպէս ... ապահովագրութեան վրայ, ... մէջ։ ... տեղեկութիւններու համար դիմել առ

Տնօրէնութիւն ի Թուրքիա
Յ. ՈՒ. ՀՈՒԻԹՕԼ ԵՒ ԸՆԿ.
Ընդհ.-Գործակալ
Ա. ՋՈՒՀԱՃԵԱՆ
Գալիս, Հուիթօլ խան
Վօյվօտա փողոց, Վիթալիս խան Ղալաթիա

ՓՕՍՖԱԹԻՆ ՖԱԼԻԷՌ

Տղայքը կատարելապէս գերցնելու և միևնոյն ժամանակ անոնց առողջութիւնն ապահովելու համար Ֆօսֆաթին Ֆալիէռ կ'կերցնեն, վեց ամսուան հասակէն սկսեալ։ ՖՕՍՖԱԹԻՆ ՖԱԼԻԷՌԸ շօքօլայի պէս քաղցրահամ, անուշահոտ և սննդարար նիւթ մ'է, զոր տղաք մեծ ախորժով կ'ուտեն և քանի ուտեն, այնքան կուժովնան, կ'գերնան, կ'զօրանան, շուտով ոտքի կ'ելլեն և տղայոց յատուկ շատ մը հիւանդութեանց դէմ կ'դնեն։

Ֆօսֆաթին Ֆալիէռ մասնաւորապէս սա յատկութիւնն ունի որ տղոց ոսկորները կ'զօրացնէ և կ'նպաստէ անոնց ակռայ հանելուն, գերծ պահելով զանոնք ատամնահանութեան հիւանդութիւններէ։

Հազարաւոր լուրջ փորձեր կ'ապացուցանեն որ Ֆօսֆաթին Ֆալիէռով մեծցող տղայք, իրենց կատարելութեան ժամանակ առոյգ, կայտառ և ուժեղ մարդիկ կ'ըլլան։ Բաց ի տղոցմէ, ամէն հասակէ անձինք գործածելով Ֆօսֆաթինը կատարելապէս կ'կազդուրուին ու կ'զօրանան։

Կ'ծախուի Կ. Պոլսոյ և գաւառներու մեծ դեղարաններուն և դեղի վաճառատուններուն մէջ։ 26—1

ԼՕԳՈՒՄ ՇԱՔԱՐԻ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ԱԼԱՄԵԱՆ

Կ. Պոլիս Էսկի Զաղթիէէ Ծոգգէսի Թիւ 57

Ֆընտըգլը, Փըստըգլը, պատէմի, սադըզլը լօգումներ, սուճուգներ եւ շաքարեղէններ արհեստին կատարեալ պահանջումով կ'պատրաստուին այս վաճառատան մէջ։ Գաւառներէ շաքարեղէնի պէտք ունեցողներ եւ փափկաճաշակ անձինք ամէն կերպով գոհ պիտի մնան այս լօգումի գործարանը դիմելով։ Գիներն յոյժ դիւրամատչելի։

Տաքերուն սկսելէն ի վեր, Ալամեան կ'վաճառէ նաեւ Գարագուլագի պաղ ջուր, լիմոնատ, և զանազան ընտիր օշարակներ։

ՏՈՔԹ. Յ. ԱՐԱՊԵԱՆ

ՄԱՆՕԹ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՓԱՐԻԶԻ

Ի Սէրէ տը Բէյօ, Թիւ 1

Կատարելագործեալ մեթոտներով ատամնաշարեր։ — Կ'հետեւի հին սկզբունքին, որ է՝ պէտք եղած տեղը ճանկիկով (քռոշէ, չէնկէլ) ակռայ դնել, պէտք եղած տեղն ալ՝ քիմքով։ Այս է ցարդ ընդունուած ապահովագոյն մեթոտը։ Դարմանում բերանի և ակռայի ամէն հիւանդութեանց։ Երկարամեայ յաջողութիւն։ Աղքատաց ձրի ատամնահանութիւն։ Ամէն օր ժամ 9էն 5, (Ը. Ե.)։

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվերբուլ և Միջերկրականի միջև ...

Անուանք	Թօն	Անուանք	Թօն
Ամասիս	3500	Թիպա	2500
Բոսֆէս	3500	Մարէօթիս	2500
Մէնֆիս	3500	Նէֆրիս	2500
Անթէլոփ	3000	Թեբս	2250
Ապոր	3000	Օսիրիս	225
Ան...բէ	3000	Ֆթահ	200
[illegible]	2550	[illegible]	150
[illegible]	2250	[illegible]	150

Դիմել առ Ժ. Վ. ՈՒԻԹՕԼ և ԸՆԿ.
Ուիթօլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ ԸՆԿ.
34, Ճէյմս Սդրիդ, Լիվըրբուլ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան 7 մէճտ. 6ամս. 3½. 3ամս. 2 Մճ. — Կ. Պոլսոյ համար 3ամս. 36 ղշ։ Արտասահման 40 ֆր. 6ամս. 20, 3ամս. 10։ Թղթատարի ծախք մեր վրայ, բաց ի Բոսթ Լոքալէ։ — Մասնավճար կ'ընդունուի։

ՆԱՄԱԿԻ ՓՈՒԼ. — Անոնք որ փոքր գումարներու փոխարէն նամակի փուլ կ'ղրկեն մեզ՝ պէտք է որ ապահովագրեն փուլ պարունակող նամակը։ Այս առթիւ նորէն կ'յիշեցնենք թէ փոքր գումարներու փոխարէն ՆԱՄԱԿԻ ՓՈՒԼ միայն կ'ընդունինք՝ 20 հատ 40նոց բուլը 20 ղշ.ի հաշիւով։

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐԷՆ կ'խնդրուի թղթին միայն մէկ երեսին վրայ գրել։ Երկու երեսի վրայ գրուածները մեծ դժուարութիւն եւ յապաղում կ'պատճառեն։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան 7 մէճտ. 6 ամս. 3½. 3 ամս. 2 Մ. Կ. Պոլսոյ համար 3 ամս. 36 ղշ։ Արտասահման 40 ֆր. 6ամս 20, 3ամս 10։ Թղթատարի ծախք մեր վրայ, բաց ի Բոսթ Լոքալէ։

Իւրաքանչիւր թերթ ն կ'ստորագրէ մի միայն
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆԸ
Առ որ կ'ուղղուին ամէն գրութիւնք
Խմբագրութեան ղրկուած նամակ... ետ չին դարձուիր.

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

ՏՊԱՐԱՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ», ՕՐԱԳՐԻ ... Թիւ 23. 25, ...

ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի (14)

ԽԵԼԱԳԱՐ ՀԱՅՈՒՀԻՆ

ՀՆԴԿԱՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

ՊԱՐԶ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Է.

Վահէ դրան բացուելու ձայնէն արթննալով, իր չորցած, խառնշտած աչքերն եկողներուն վրայ դարձուց, և երբ Տնօրէնն ու Տօքթորը տեսաւ, իր տժգոյն շրթներուն վրայ յանկարծ անուշ և մելամաղձոտ ժպիտ մ'ուրուագծուեցաւ։

Տնօրէնն ու Տօքթորն անկողնոյն մօտեցան։

—Ի՞նչպէս, տղա՛ս, լաւ քնացա՞ր, հարցուց Տնօրէնը։

—Այո՛, շնորհակալ եմ, շատ հանգիստ քնացայ, ըսաւ Վահէ, անկողնոյն մէջ նստելով։

—Կ'յուսամ որ աղէկ ես։

—Այո՛, շնորհակալ եմ, քիչ մը աղէկ եմ։

—Տե՛ս, Տօքթորն ալ միասին բերի որ քեզի լաւ մը քննէ։

—Ո՞ր տեղդ կ'ցաւի, տղա՛ս, հարցուց բժիշկը։

—Մասնաւոր ցաւ մը չունիմ, պատասխանեց Վահէ։

—Կ'հազա՞ս։

—Ո՛չ։ Միայն շատ նիհար և վատոյժ եմ։ Ուրիշ բան չունիմ։

Տօքթորն ուշադրութեամբ քննեց Վահէի կուրծքը, սիրտը, և ուրիշ կարգ մը հարցումներէ ետքը,

—Փառք Աստուծոյ, բան մը չունի, ըսաւ, շուտով պիտի կրնամ առողջացնել որ դասերը շարունակէ։

—Հարկա՛ւ, պատասխանեց Տնօրէնն, և Վահէի դառնալով,

—Տղա՛ս, ըսաւ, դուն հագուելու վրայ եղիր, ես բժշկին հետ քիչ մը պիտի տեսնուիմ, յետոյ կուգամ կ'առնեմ քեզի որ իրիկուան ճաշն ընենք և ետքը պտոյտ մը կատարենք պարտէզին մէջ, չէ՞։

—Շատ լաւ, Տէ՛ր իմ, շնորհակալ եմ, պատասխանեց Վահէ։

Ասոր վրայ Տնօրէնն ու բժիշկն ելան հիւրասենեակ գացին։

—Տօքթո՛ր, արդեօք վտանգ մը կա՞յ, հարցուց Տնօրէնն անձկութեամբ։

—Ձեր հարցումին ստոյգ պատասխան մը տալէ առաջ, պէտք է խորհիմ քիչ մը։ Ճաշէն ետքը նորէն կը տեսնուինք։

Բժշկին մեկնելէն ետքը, Տօքթորը Վահէի սենեակը գնաց ու միատեղ ճաշարան իջան։ Սեղանին վրայ Տնօրէնը կ'ստիպէր Վահէն որ ուտէ։

—Կե՛ր, տղա՛ս, որ ույժ առնես։ Հիմա Տօքթորն ալ պիտի գայ և քեզի շուտով աղէկցնելու համար պէտք եղած միջոցներուն վրայ պիտի խորհրդակցինք։

—Ա՛հ, գիտ ո՛րքան կ'սիրէք, Տէ՛ր իմ, ըսաւ Վահէ յուզուած։

—Այո՛, կ'սիրեմ քեզի, Վահէ՛, կը սիրեմ, զի դուն բարեսիրտ, խելացի ու ազնիւ երիտասարդ մ'ես, ու միշտ աշխատասէր, միշտ պարտաճանաչ և դասակիցներուդ մէջ առաջին հանդիսացած ես։

—Շնորհակալ եմ, Տէ՛ր իմ։

—Հիմա երբ ես Տօքթորին հետ տեսնուիմ, կ'յուսամ որ դուն ալ մըտքովդ պիտի աղօթես Աստուծոյ որ թէ՛ մխիթարութիւն և թէ՛ բժշկութիւն պարգեւէ քեզի։ Անիկայ ամենուս հայրըն է, ու գիտէ ինչ որ պէտք է մեզ։ Ա՛ն միայն կարող է ամէնէն ուղիղ, ամէնէն օգտակար, ամէնէն փըրկարար խորհուրդները թելադրել մեզ, և մեր կեանքին մեծ ճգնաժամերուն մէջ մանաւանդ, պէտք է գիտնանք մեր յոյսն Անոր վրայ դնել, և Անկէ սպասել ամէնէն բարի խորհուրդներն ու ընթացքի կանոնները։

—Այո՛, Տէ՛ր իմ։

—Դեռ ուրիշ բաներ ալ ունիմ ըսելիք, շարունակեց Տնօրէնը, բայց հանգիստ քնացի՛ր ու վաղը կ'տեսնուինք։

—Շնորհակալ եմ, Տէ՛ր իմ, ըսաւ Վահէ։

Տնօրէնն ելաւ հիւրասենեակը գընաց, բժշկին սպասելու համար։ Շատ չանցած բժիշկը նորէն եկաւ։

—Հիմա Վահէի վիճակին վրայ պիտի խօսինք, այնպէս չէ՞, ըսաւ Տօքթորը։

—Այո՛, Տօքթո՛ր, ո՛չ միայն պիտի խօսինք, այլ անոր շուտով բժշկուելուն միջոցներն ալ պիտի խորհինք։

—Լա՛ւ։ Այս տղան ներքին գործարանաց ո՛և է հիւանդութիւն չունի։ Բայց չափազանց նիհար է։ Ահա այս նիհարութեան պատճառը մէջտեղէն վերցնելու է։ Ինչպէս գիտէք, Վահէի նիհարնալուն գլխաւոր պատճառը սիրահարութիւնն է։ Ուրեմն հարկ է որ անգամ մ'ալ չտեսնէ իր սիրուհին։ Անոր յիշատակը մտքէն հանելու է, իր յարաբերութիւնները բոլորովին խզելով։ Եւ այս բան կարելի չէ։ Այս տղան մինչեւ վերջն անշուշտ չէք կրնար բանտարկել դպրոցին մէջ։ Հարկաւ օր մը դուրս պիտի ելնէ ու նորէն նոյն անդունդին մէջ պիտի գլորի։

—Լա՛ւ, ի՞նչպէս ընենք ուրեմն։ Ըսածնիդ շիտակ է։ Եթէ Վահէ դուրս ելնէ, բնաւ տարակոյս չկայ որ նորէն պիտի շարունակէ իր յարաբերութիւններն այն աղջկան հետ։

—Մէ՛կ միջոց միայն կ'տեսնեմ այս տղան փրկելու համար։

—Ո՞րն է, Տօքթո՛ր։

—Ճամբորդութիւնը։ Այս տղան, ժամանակի մը համար, հեռու տեղ մը ղրկելու է։ Ունի՞ք բարեկամ մը այդպիսի հեռու տեղ մը։ Եթէ ունիք, տղան ազատեցաւ, և դուք ալ մեծ մտատանջութենէ մը կ'ազատիք։

—Այո՛, մեծ մտատանջութեան մէջ եմ այս տղուն համար։ Երբ առաջին անգամ տեսայ անոր ցաւալի վիճակը, շատ յուզուեցայ։ Ի՞նչպէս թողում որ երթայ ինքնասպան ըլլայ։

—Շատ բարեսիրտ էք, յարեց Տօքթորը։ Արդարեւ ցաւալի վիճակ է։ Խեղճ տղան հալեր մաշեր է։ Եթէ այսպէս երթայ, ներքին գործարանաց հիւանդութիւն մ'ալ չուշանար։

Տնօրէնն, որ կ'մտածէր, յանկարծ գլուխը վերցնելով և Տօքթորին ձեռքը սեղմելով ըսաւ,

—Գտա՛յ։

—Ի՞նչպէ՞ս։

—Վիեննա կ'ղրկեմ։ Զըլլա՞ր։

—Հոն բարեկամ ունի՞ք։

—Այո՛, բարեկամ մ'ունիմ որուն հետ եղբօր պէս ենք։

—Ո՞վ է արդեօք։

—Իմացա՞ծ էք նշանաւոր յիմարաբոյժ Տքդ. Քիւնի անունը։

—Այո՛, իմացած եմ։ Սակայն վըստա՞հ էք որ ընդունի Վահէն։

—Վստահ եմ։ Ինք ամուրի ու հարուստ մարդ մ'է, և Բժշկական Համալսարանին մէջ Բրոֆէսորութիւն կ'ընէ։ Երեսուն տարուան բարեկամս է։ Ամերիկայի մէջ ճանչցանք և սիրեցինք զիրար։ Ամէն տարի կ'թղթակցինք։

—Ի՞նչ աղուոր զուգադիպութիւն, Վահէի գործն եղաւ կրնամ ըսել։ Եթէ ձեր այս ըսածն ի գործ դնել կարենաք, մեծ բարութիւն մը գործած պիտի ըլլաք։ Հոգի մը փրկած պիտի ըլլաք ապահովապէս, և բարեգործութեան այսքան եզական առիթներ ամէն ատեն չեն գար։

—Ի՞նչպէս, Տօքթո՛ր։

—Դուք փիլիսոփայութիւն կ'սիրէք քիչ մը, այնպէս չէ՞։

—Այո՛, ո՞վ չի սիրեր։ Մնաց որ, ես Ամերիկա իմ դասիս մէջ առաջինն էի Փիլիսոփայութեան!!։

—Ուրեմն, քանի որ ժամանակ ունինք, քանի մը կէտերու մասին գիտցածս կամ դիտածս ըսեմ ձեզ։ Վահէին ուղեղն, այսօր, մէ՛կ բանով միայն կ'զբաղի։ Ամբողջ ուղեղային կարողութիւնն այդ մէ՛կ բանին ազդեցութեան տակ է։ Ահա ասոր համար է որ ուղեղը չափազանց յոգնելով՝ ազդեր է մարմնոյն վրայ, ջղային դրութեան միջոցաւ։ Հիմակ ա՛յն տեսակ բան մը հայթայթելու է այս տղուն որ այն մէկ բանէն աւելի՝ կամ անոր հաւասար՝ զբաղեցնէ ուղեղը։ Մարդուս ուղեղը շարունակ զբաղեցնող պատճառի մը ազդեցութիւնը տկարացնելու կամ բոլորովին ջնջելու համար, առաջինէն աւելի զբաղեցնող երկրորդ պատճառ մը գտնելու է։ Հո՛ս է բոլոր խնդիրը։

—Հասկցայ, Տօքթո՛ր, հասկցայ, ըսաւ Տնօրէնը, որ ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր բժշկին տուած բացատրութիւնները։

—Այս հասակն ունեցող երիտասարդներ շատ կ'փափաքին իրենց համար անծանօթ տեղեր տեսնել։ Փորձով գիտեմ այս բանը։ Հիմակ երբ Վահէ իմանայ թէ Վիեննա պիտի ղրկէք զինք, թերեւս մեծ ուրախութիւն մը զգայ, և իր միտքը կարգ մը երեւակայական մտածումներով զբաղի, որով առաջուան մտազբաղումը տակաւ առ տակաւ կորսնցնէ իր զօրութիւն, և վերջապէս յիշատակ մը միայն մնայ անկէ։

(Շար. ն. Շբ. օր) ՏՐԴ. ՃԷԼԱԼԵԱՆ